Վանիկ Վիրաբյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան
vanik.virabyan@mail.ru

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ 1919 Թ. ՁՈՎ-ԲԱՍԱՐԳԵՉԱՐՅԱՆ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԳՆԴԱՊԵՏ ՔԼԱՅՎ ԹԵՄՊԵՐԼԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*

Հիմնաբառեր. Ձոդ, Բասարգեչար (Վարդենիս), մահմեդական բնակչություն, թաթարական (ադրբեջանական) խռովություն, հայկական բանակ, գնդապետ Քլայվ Թեմպերլի, Հայաստանի Հանրապետություն:

1918–1920 թվականներին Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) պետաքաղաքական կյանքի կարևորագույն դրսևորումներց է եղել հայկական պետականությունը ներսից կազմաքանդող ուժերի դեմ մշտական պայքարը: Սահմանատարածքային վեճերը հարևան հանրապետությունների՝ Ադրբեջանի և Վրաստանի հետ ունեին հին արմատներ և մշտապես գտնվում էին արտաքին քաղաքական կողմնորոշումների հիմքում: Դրանք առաջ եկան անդրկովկասյան երեք հանրապետությունների կազմավորման գործընթացին զուգընթաց, երբ ամեն մեկը ձեռնամուխ եղավ սեփական զինուժի ստեղծմանը:

ՀՀ տարածքային ամբողջականության և անվտանգության ապահովման տեսանկյունից առավել կարևորվեց այն շրջանների հարցը, որտեղ ապրում էր մեծ թվով մահմեդական բնակչություն, որը բոլորովին էլ օրինապաշտ դիրքորոշում չուներ օրինական իշխանությունների նկատմամբ և հետևաբար հայկական բնակչության իրավունքների ոտնահարման ավելի մեծ հնարավորություններ կային: Հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումների ժամանակ ՀՀ Ներքին գործերի նախարարության և կանոնավոր բանակի զորամասերի կողմից ձեռնարկված համատեղ միջոցառումների արդյունքում երկրից արտաքսվեց զգալի թվով մահմեդական բնակչություն, որը կենտրոնանալով գլխավորապես սահմանամերձ գոտիներում, այդ թվում Ձոդ-Բասարգեչարում[1], ստեղծել էր խռովության

* Ստացվել է 09.03.2022 թ., ուղարկվել է գրախոսման 16.04.2022 թ., ընդունվել է տպագրության 05.08.2022 թ.: Հետազոտությունը տպագրվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թ. հոկտեմբերի 11-ի N 1693-Ա/2 հրամանով հաստատված Գիտության Պետական Կոմիտեի Պայմանագրային (Թեմատիկ) Հայտի (21T-6A102. «Հայաստանը Անդրկովկասում եվրոպական երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչությունների հետ փոխհարաբերությունների համատեքստում (1917–1920 թթ.)» շրջանակում:

[1] Բասարգեչար – շրջան և համանուն գյուղ Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառում, ներկայիս ՀՀ Գեղարքունիքի մարզի հարավարևելյան հատվածում: Տեղանունը ծագել

օջախներ: (Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան 1986, 609: Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան 1998, 782–783):

Հետազոտվող խնդրին առաջին անգամ անդրադարձ է կատարվել տողերիս հեղինակի կողմից դեռևս 2003 և 2009 թվականներին հրատարակված աշխատանքներում (Վիրաբյան 2003, 98–141, Վիրաբյան 2009, 222–253), որոնցում վերհանվել են հանրապետության անվտանգային շահերի և տարածքային ամբողջականության ապահովմանն ուղղված ՀՀ կառավարության ջանքերը՝ Զոդ-Բասարգեչարում: Ինչ վերաբերում է 2012 թ. լույս տեսած Հ. Հարությունյանի աշխատանքին (Հարությունյան 2012, 285, 295–310), ապա չնչին վերապահումներով հանդերձ՝ այն գրեթե կրկնում է Վ. Վիրաբյանի վերը նշված աշխատանքը, ինչը պարզորոշ երևում է հեղինակի տողատակում տրված հղումներից: Նորօրյա մեկնաբանության առումով դիտարժան է Ա. Գրիգորյանի և Ա. Բոբոխյանի համահեղինակած համալիր բնույթի աշխատանքը (Գրիգորյան, Բոբոխյան 2022), որում ներկայացված են հիմնախնդրի պատմագիտական, ազգագրական-հնագիտական և այլ տեսանկյունները: Հեղինակները ընդգծում են, որ Վ. Վիրաբյանի աշխատանքը գրված է այլ մեկնակետից, այն է՝ Զոդ-Բասարգեչարում 1919 թ. ՀՀ ուժային կառույցների՝ ՆԳՆ մարմինների և բանակի ծավալած գործունեության և դրանում Հայաստանում բրիտանական ռազմաքաղաքական առաքելության ներկայացուցիչ գնդապետ Քլայվ Էրրինգտոն Թեմպերլիի ունեցած մասնակցության լուսաբանման տեսանկյունից, ինչն էլ պայմանավորում է ներկայացվող հիմնախնդրի գիտական նորույթը և արդի հնչեղությունը:

Մահմեդական շարժումների ակտիվացումը ամբողջ 1918 թ. երկրորդ կեսին–1919 թ. ընթացքում լարվածության մեջ պահեցին նորաստեղծ հայկական պետականությունը: 1919 թ. սկզբին տեղի ունեցան ՀՀ տարածքից մահմեդական բնակչության արտաքսման, և ընդհակառակը, Ադրբեջանի հայկական շրջաններից՝ դեպի Հայաստան նմանատիպ գործընթացները: ՀՀ տարածքային վարչակազմի և միլիցիայի կոմիսարը 1919 թ. մարտի 11-ին ՆԳ նախարարին ուղղած զեկուցագրում ընդգծում էր, որ հայ-թուրքական բախումների ողջ ընթացքում ՀՀ սահմաններից դուրս են արտաքսվել 111560 թաթար, որից 15 հազար քուրդ: Այդ ընթացքում ետ են վերադարձել արտաքսված 29 հազար թաթար, իսկ արտաքսված քրդերը ետ չեն վերադարձել: Ընդգծվում էր, որ ՀՀ տարածքում մահմեդականներից ազատված գյուղերի թիվը հասնում էր 248-ի, որոնցից 50-ը ավերված էին, իսկ լիովին ազատ 56 գյուղերը զբաղեցվել էին գլխավորապես Արևմտյան

է թուրքերեն «բասար» (հարձակվել, տրորել) և «գեչար» (անցնել) բառերից ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի 1969 թ. հունիսի 2-ի հրամանով վերանվանվել է Վարդենիս (Գրիգորյան, Բոբոխյան 2022, 13):

Զոդ գյուղը Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Սոթք գավառում է (Зод, Zod, Աղեղուշ, Զոթ, Զոտ, Ծավդենք, Ծոթ, Հոգ, Սոդ, Սոդք, Սոթ, Սոթից ավան, Սոթք), հետագայում՝ ՀԽՍՀ Վարդենիսի շրջանում, Սոթ-Զոդ գետի ափին, Զոդի լեռնանցքի մոտ՝ երեք կողմից լեռներով շրջապատված: Գյուղից արևելք գտնվում են Զոդի ոսկու հանքերը, որոնք արդյունահանվել են դեռևս մեր թվականությունից մի քանի հարյուրամյակ առաջ: Միջնադարյան հայկական աղբյուրներում հայտնի է որպես Սյունիք աշխարհի Սոթք գավառի Վասակաշեն գյուղ: 1991 թ. վերանվանվել է Սոթք:

Հայաստանից և Կարսի մարզից եկած փախստականներով՝ (Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 44, թ. 16)։ ՀՀ կառավարությունը ձգտում էր սահմանամերձ գոտում միատարր բնակչություն ստեղծել, ապահովագրելով այն վտանգներից, որոնք գալիս էին Ադրբեջանից և Թուրքիայից։

Այս հարցի շուրջ Հ. Հարությունյանը անհամաձայնություն է արտահայտել գտնելով, որ տեղահանման այդպիսի գործընթացներ տեղի չեն ունեցել (Հարությունյան 2012, 307)։ Սակայն այս կապակցությամբ ցանկանում ենք հատուկ ընդգծել, որ մի բան է, որ ցանկացած պետություն ձգտում է իր տարածքում բնիկ բնակչությանը գերակշռությանը և էթնիկ փոքրամասնությունների կառավարմանը, ինչպես այսօր կարող ենք հանդիպել շատ երկրներում, մեկ այլ բան է լինել փոքրամասնություն սեփական հայրենիքում և մշտապես վտանգված։ Արդի փուլում ցանկացած քիչ թե շատ կազմակերպված երկրում, օրինակ ԱՄՆ-ում, Ռուսաստանի Դաշնությունում, չեն կարող իրենց վտանգված զգալ իրենց տարածքներում բնակվող մի քանի միլիոն ոչ էթնիկ բնակչությունից։ Միայն թույլ և անվտանգային առումով անկազմակերպ պետություններն են վախենում նման երևույթներից և իրողություններից։

ՀՀ տարածքում ապրող մահմեդական զգալի զանգվածն էլ բավական էր, որ (ըստ Հովհաննես Քաջազնունու կողմից ԱՄՆ-ի սենատին 1919 թ. նոյեմբերի 10-ին ներկայացված ՀՀ կառավարության հուշագրի՝ մահմեդականների թիվը [թաթար, թուրք, թուրքմեն, կարափափախ] կազմում էր 588000 մարդ կամ ողջ բնակչության 27%-ը (Քաջազնունի 1993, 11) Հանրապետությունը մշտապես գտնվեր տագնապի մեջ, մանավանդ, որ այդ զանգվածին փորձում էին կազմակերպել Ադրբեջանից և Թուր-քիայից ժամանած լրտեսները, զանազան էմիսարները՝ հսկայական կեղծ փողերի զանգվածով, և դրդել ապստամբության օրինական իշխանությունների դեմ ու սատարել անջատողական տրամադրությունները։ Այս խնդրում ՀՀ կառավարությունը զգալի անելիք ունեցավ, փորձելով արմատախիլ անել դրանք գրեթե ամենուր. Նոր Բայազետի գավառի Բասարգեչարի շրջանում (Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան 1986, 609, Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան 1998, 651, 782–782), թե՛ Զանգեզուրում, թե՛ Կարսում։

Մահմեդական ընդվզումներն իրենց զգացնել էին տալիս ամենուր, որտեղ կար մահմեդական քիչ թե շատ հոծ բնակչություն, որի դեմ պայքարելը դժվար էր, որը լուծելու համար ներգրավում էր զորուժ, որն էլ դրանից ոչ թե ուժեղանում, այլ թուլանում էր՝ մասնակցելով ներքին կռիվներին, Հայաստանի տարածքում գտնվող մահմեդական բնակչության ընդվզումների «հանդարտեցմանը», և օրինական իշխանությունների լիազորությունները վերահաստատելու համար։ Դա շատ ցայտուն դրսևորվեց Զոդ–Բասարգեչարյան (Վարդենիս) խռովության ճնշման գործում, երբ Ադրբեջանի Հանրապետությունը հենվելով մահմեդական բնակչության վրա Սևանա լճի ավազանում, փորձեց հավակնություններ ներկայացնել ՀՀ օրինական տարածքի մի մասի նկատմամբ։ Այս մասին Ռուբեն Տեր-Մինասյանը գրում է. «Թաթարները կեդրոն ունենալով Զոդը, հոն հաստատած էին Ադրբեջանի իշխանութիւնը և ամուր փակած էին Ջիւանշիրի ճանապարհները. Բայազետի շրջանի Բասարգեչարի շրջանում, Սևանայ լճից հիւսիս մօտ 2000 քառ. վերստ տա-

ռածութեան վրայ գտնուող թաթար գիւղերը, որ անմիջապէս կապուած էին Ջիւանշիրի հետ և սահմանակից Ադրբեջանին, իրենց յայտարարում էին ոչ թե անկախ, այլ մասը Ադրբեջանի. հոն նստած էին Ադրբեջանի գործակալներ և պաշտօնեաներ, իսկ մէր պաշտօնէութիւնը մուտք չուներ այդ երկրում: Այդ շրջանի կորուստը խիստ վնասակար էր Հայաստանի համար ոչ թե տնտեսական, այլ ռազմական տեսակետից: Ադրբեջանը մտած էր լինում դրանով Սևանայ լճի աւազանը, նա կապ կարող էր պահել Ջղինի վրայով Վեդիբասարի և Սադարակի հետ, ուրեմն և Տաճկաստանի հետ: Նրա առաջ բաց էին Հայաստանի բոլոր ճանապարհները և ուզած ատեն պիտի կարողանար կտրել Դարալագեազի և Զանգեզուրի շրջանները, ինչպէս և Դիլիջանի և Երևանի շրջանները: Դա մի մուրճ էր բարձրացված հայկական գաւառների գլխին» (Ռուբէն 1982, 210, 326–327):

Դժվար է միանշանակ համակարծիք լինել, թե մեր պաշտոնեությունը բոլորովին մուտք չուներ այդ շրջանները, որ «այս վտանգի կարևորութիւնը հարկ եղած չափով չէր զգացուում կառավարութեան կողմից» և վիճակը բարելավելու համար գնաց բանակցությունների, ինչը Ռուբենը աննպատակահարմար էր համարում, այդուհանդերձ պետք է նկատել, որ առկա ռազմաքաղաքական ռեսուրսների և հնարավորությունների պայմաններում, թերևս ՀՀ կառավարությունն ավելի ճիշտ էր՝ գնալով այդ տարբերակին և փորձելով բախումը հանգուցալուծել:

Ադրբեջանաթուրքական այդ նկրտումների մասին տեղեկություններ հայթայթվեցին հետախուզական մարմինների կողմից: Սևանի ավազանի և ՀՀ շուրջ ստեղծված այդ իրավիճակը լավ է ներկայացնում Տիգրան Դեվոյանցը. «Հետագայ դէպքերը հետևանք են մահմեդականների այն ծրագրի գործադրութեան, որով Ազերբէյջանը պէտք է միանար Թուրքիայի հետ և Հայաստանը պէտք է չէզոքացուէր, սահմանափակուելով Սևանայ լճով, Երևանով ու Ալեքսանդրապոլով: Միևնոյն ժամանակ բացարձակ կերպով պարզուում է գոյութիւն ունեցող լրիւ կապը Ազերբէյջանի և Տաճկաստանի գործողութիւնների մէջ ու Ազերբէյջանի ղեկավարողի դերը բոլոր այն թշնամական գործողութիւնների մէջ, որ ուղղուած են անմիջականօրեն Հայաստանի դէմ այն միջոցին, երբ Թուրքիան ժամանակաւորապես աւելի զբաղուած է իր ներքին գործերով և Փարիզի խորհրդաժողովի որոշումներին դիմադրելու կազմակերպութեամբ» (Դէոյեանց 1945, 96):

Դատելով միլիցիապետերի, գավառապետերի և զինվորական մարմինների միջև եղած գրագրությունից՝ տագնապալից նախանշանները իրենց զգացնել են տվել դեռևս 1918 թ. դեկտեմբեր–1919 թ. հունվար ամիսներին՝ մինչև հայտնի Զոդբասարգեչարյան մահմեդական ընդվզումները, երբ թաթարական բեկերի հրահրմամբ բնակչությունը հայտարարեց, որ միանում է Ադրբեջանին: Մահմեդական տարրերը լոյալ վերաբերմունք չէին դրսևորում օրինական իշխանությունների նկատմամբ նաև ՀՀ այլ հատվածներում, հաճախակի ապստամբում էին, և իրենց խռովահույզ տրամադրություններով լարված վիճակ ստեղծում: Ստեղծված իրավիճակում հատուկ ծառայությունները հարկադրված էին այս կամ այն վայրում՝ Զանգիբասար, Կարս, Բասարգեչար և այլուր հակառակորդի ծպտված գործակալներին ու լրտեսներին մերկացնել՝ կանխելով նրանց հակահայկական գործողությունները:

Երբեմն էլ ՀՀ իշխանությունները բախվում էին «տեղական» բնույթի խնդիրների հետ՝ կանխելով գավառական հայ իշխանավորների օրինազանցությունները: ՆԳ նախարարին հղած 1919թ. գրության մեջ Գլխավոր շտաբի մի գնդապետ գրում էր, որ 3-րդ հետևակային բրիգադի պետի տեղեկություններով՝ Քարվանսարայի կոմիսարը կաշառքի դիմաց ազատ բաց է թողնում զինված մարդկանց Ադրբեջանից Հայաստան քոչի համար, պահանջելով անհապաղ ձեռնարկել միջոցներ՝ դադարեցնելու զինված մարդկանց ապօրինի անցումը սահմանով (ՀԱԱ, ֆ.201, ց.1, գ.168, թ.32): Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետի օգնական պրապորշչիկ Հովսեփյանը հակահետախուզական բաժնին ուղղված գրության մեջ հայտնում էր ադրբեջանաթուրքական նկրտումների հետ Կարսի մարզում, որը հաստատում էր նաև Հայաստանում ֆրանսիական ռազմական ներկայացուցչության սպա Անտուան Պուադեբարը[2] (Տեր-Մինասյան 2004, 97: Туманян 2012, 402), ում տվյալներով 1918թ. վերջերին–1919թ. սկզբներին թուրք գործակալները զբաղված էին ակտիվ քարոզչությամբ նշված տարածքում (Տեր-Մինասյան 2004, 97): Հետախուզական ամփոփագրում հաղորդվում էր, որ «Շուրայի» (այսպես կոչված «Միլլի Շուրա», Կարսի մարզում գտնվող մահմեդական «ինքնավարություն») նախկին «փոխպրեզիդենտ» Ալի Ռիզան փախչելով Բաթումիի բանտից, Թիֆլիսով անցել է Ղարաչախ, այնտեղից էլ՝ Ադրբաբայի շրջան, որից հետո՝ Ջարուշատով Օլթիի շրջան (1919թ. հուլիս), ավելացնելով, որ կասկածներ չկան, որ Ադրբեջանը ձգտում է Ադրբաբայի, Ջարուշատի, Արդահանի և Օլթիի շրջանում ստեղծել «երկրորդ Ղարաբաղ, որ նկատվում է նաև վրաց-ադրբեջանական համադաշնակցություն, որ Ախալքալաքի գավառի սահմանամերձ Գորլովկա և Տրոիցկ գյուղերն են ժամանել ավելի քան 300 վրացական զինվորներ:

Պրապորշչիկ Հովսեփյանը տվյալներ էր բերում թաթարների՝ քրդերի հետ համագործակցության մասին, որ այդ կապակցությամբ զրույց է ունեցել Էրզրումում գտնվող բրիտանական շտաբի գնդապետ Ալֆրեդ Ռոուլինսոնի հետ (ՀԱԱ, ֆ.201, ց.1, գ.168, թ.38): 1919թ. մայիսի 24-ի օպերատիվ հետախուզական ամփոփագրում փոխգնդապետ Ալեքսանդր Շնեուրը քուրդ-թաթարական և թուրք-վրացական ոտնձգությունների մասին հաղորդում է Կաղզվանում, Մերդենեկում և Արդահանի շրջաններում, ավելացնելով, որ Արդահանի ուղղությամբ ուղարկվել է հայկական զորամաս (ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.73, թ.21:): Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանյանը 1919թ. օգոստոսի 22-ի զեկույցում՝ ուղղված ՀՀ ՆԳ նախարարին, հաղորդում է Արդահանի շրջանում վրացական զորամասերի լրտեսական-հրահրիչ գործողությունների մասին (ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.73, թ.126:):

Իրավիճակն արմատական փոփոխության չենթարկվեց նաև 1919թ. երկրորդ կեսին, վրացիները շարունակեցին սադրանքները Արդահանի շրջանում. ՀՀ Արտգործնախարարության գլխավոր քարտուղարը 1919թ. սեպտեմբերին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարին հղած հեռագրում հայտնում էր, որ հայկական հակահետախուզության ձեռքն է ընկել Արդահանի վրացական ջոկա-

[2] Անտուան Պուադեբար (1878–1955)–Ֆրանսիացի հնագետ, պատմաբան, օդաչու, քարտեզագիր, միսիոներ, ով լավ հայերեն գիտեր:

տի պետ Կվիտաշվիլու ձեռքով գրված կոչը, ըստ որի Արդահանի շրջանի բնակիչների ցանկությունը Վրաստանին միանալու աղմուկը ոչ այլ ինչ է, եթե ոչ վրաց պաշտոնական անձանց կողմից նախապատրաստված սադրիչ գործողություն, որի մասին բողոք հայտնվեց Երևանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մախարաձեին (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 353, թ. 80)։ Հետախուզական բաժանմունքի 1920 թ. սեպտեմբերի 3-ի գաղտնի ամփոփագիրը վկայում է Վրաստանի օգտին քարոզչության, նրանց զորքերի տեղաբաշխման մասին Արդահանից Արդվին ընկած միջակայքում։ Դրանում նաև նշվում էր, որ Արդահանը Վրաստանին միացնելու համար Ախալքալաքից Արդահան է ուղարկվել 3-րդ լեռնային մարտկոցը և 400–500 հեծյալներից 2-րդ հետևակային գունդը, Ախալքալաքում պատրաստի վիճակում պահելով ժողովրդական գվարդիան, 531 զինվոր ունեցող 12-րդ գումարտակը, սպասելով Ախալցխայից նոր զորուժի ժամանմանը՝ բաղկացած 7 սպաներից և 800 զինվորներից, ավելացնելով, որ Ախալքալաքում կա 180–200 արկղ փամփուշտ, իսկ Եկատերինֆելդում տեղաբաշխված են մոտ 200 հոգանոց ժողովրդական գվարդիա և հրետանային պահեստներ (ՀՀ արխիվ (Բոստոն), թիվ 25/25)։

Վրացիները օգտվելով ՀՀ համար ստեղծված անբարենպաստ իրավիճակից՝ կապված թուրքական սպառնալիքի հետ, 1920 թ. հոկտեմբերի վերջերին՝ ակտիվացրին իրենց գործողությունները՝ Բաթումիից զորքեր տեղափոխելով Արդահանի և Արդվինի մարզ, ինչի մասին վկայում են 11-րդ Կարմիր Բանակի օպերատիվ բաժանմունքի պետը, կոմիսարը և հետախուզական բաժանմունքի պետը Անդրկովկասի վերաբերյալ իրենց բացատրության մեջ (Нагорный Карабах 595–596)։

Այս հանգամանքն խորաթափանցորեն է նկատել Հովհ. Քաջազնունին. «վրացիները շատ վարպետորեն (աւելացնեմ՝ նաև ցինիկաբար) օգտուում էին հայ-թուրքական ու հայ-թաթարական հակառակութիւններից՝ իրանց արտօնեալ դիրքը ամրացնելու համար։ Յենուելով թուրքերի ու թաթարների վրայ կամ՝ սպառնալով, թէ այն ուղղութեամբ կը շիտկեն իրանց ճակատը, անելանելի կացութեան մէջ էին դնում մեզ ու հարկադրում՝ իրանց ցանկութիւններին յարմարուելու։ Ապա՝ երեսները մեր կողմը դարձնելով, մեզ մերձենալով (կամ մերձենալու մտադրութիւն ցուցադրելով), կաշկանդում էին ու որոշ չափով ահաբեկում նաև ազրբեյջանցիներին։ Քաղաքական շանտաժ էր սա, որ մեծ առավելութիւն էր տալիս վրացիներին ու ապահովեցնում նրանց գերիշխանութիւնը» (Քաջազնունի 1923, 17)։

1919 թ. հուլիսի 26-ի հեռագրում՝ ուղղված ՆԳ նախարարին, Դրոյին և այդ ժամանակ արդեն գնդապետ Ալ. Շնեուրին, Նոր Բայազետի գավառի կոմիսար Խոսրոևը հայտնում էր, որ հետախույզ «Քուրդը» (Ալի Ալահվերդի) Շիշկայա գյուղում 2 թաթարներից տեղեկացել է, որ թաթարները պատրաստվում են վերցնել Բասարգեչարը, հայերին քշելով, ակնկալելով հաջողության դեպքում հայերին վռնդել Ղարաբաղից և Ելիզավետպոլից՝ այնտեղ տեղաբաշխելով թաթարներին (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 73, թ. 75)։ Նոր Բայազետի գավառային կոմիսար Խոսրոևը 1919 թ. հուլիսի 30-ին գնդապետ Ալ. Շնեուրին ուղղված մեկ այլ հեռագրում տեղեկացնում էր, որ «Քուրդ» անունով հետախույզը հաղորդում է, որ թաթարները պահանջագիր են ուղարկել Ելիզավետպոլ՝ խնդրելով ուղարկել զորքեր, սպառնալով

հակառակ դեպքում՝ ենթարկվել ՀՀ իշխանությանը (ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 168, թ. 12):

Դրոյին և ՀՀ ՆԳ նախարարին ուղարկված 1919 թ. օգոստոսի 7-ի հեռագրում Համազասպը շեշտում էր Դալլար – Զարդախլու – Գետաբեկ - Ղալաքենդ գծի վրա տեղաբաշխված ադրբեջանական զորքերի կողմից Ջոդ – Շիշկայա շրջանին սպառնացող վտանգի մասին, խնդրելով միլիցիոներներով և այլ ուժերով շտապ ամրացնել տարածքը (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 1, թ. 311):

Ստեղծված իրավիճակում հայկական իշխանությունները փորձեցին զսպել հնարավոր հակահայկական մահմեդական ընդվզումները և սակայն պատժիչ զորամասերի ուղարկումը շրջան դարձավ անխուսափելի: 1918 թ. աշնանը Երևանից եկած պատժիչ զորամասը հայկական գյուղերում հարկահավաքության խնդիրը լուծելուց հետո մտավ Բասարգեչարի շրջան: Հատկանշական է, որ ինչպես շատ տեղին նշում են Ավ. Գրիգորյանը և Ա. Բոբոխյանը, մինչ Ջոդի օպերացիայի զենքի ուժով լուծումը ՀՀ զինված ուժերը սկզբում փորձեցին խաղաղ հանգուցուլուծում գտնել և զուռնա-դհոլի նվագակցությամբ մոտեցան թաթարական բնակավայրերին՝ առաջարկելով խաղաղություն՝ որպես հակամարտության լուծման ձև և միայն գնդակոծվելուց հետո պատասխանեցին կրակով (Գրիգորյան, Բոբոխյան 2022, 15):

Անդրկովկասյան հանրապետությունների ստեղծումից հետո Ջոդ գյուղի բնակիչ, շրջանի նախկին գավառական կոմիսար Աբբաս Ալի բեկը, փորձեց Բասարգեչարի շրջանը միացնել Ադրբեջանի Հանրապետությանը: Այդ նպատակի իրագործման նպատակով շարքային ժողովրդից հավաքելով 60000 ռուբլի գումար, Ադրբեջանը նաև մի քանի ազդեցիկ թուրքերի գործուղեց: Հնարավոր առճակատումը խաղաղ եղանակով հանգուցալուծելու նպատակով Նոր Բայազետի գավառական կոմիսարը Աբբաս Ալի բեկին կանչում է Նոր Բայազետ, սակայն վերջինս մերժում է, բացահայտ հայտարարելով, որ ինքը չի ճանաչում գավառային կոմիսարի իշխանությունը: Բասարգեչար է ժամանում պրապորշիկ Տիգրան Բաղդասարյանի պատժիչ զորամասը, քանզի արդեն 1918 թ. սեպտեմբերի 18-ին Արամ Մանուկյանը Նոր Բայազետի գավառային կոմիսարին հանձնարարել էր կանխել Բասարգեչարի շրջանի նկատմամբ Ադրբեջանի իշխանության հաստատմանը ձգտող թաթարների ոտնձգությունները և հայտարարել, որ նրանք պարտավոր են կատարել ՀՀ կառավարության օրինական պահանջները (Գրիգորյան, Բոբոխյան, 2022, 108):

Կոմիսարը իր մոտ է կանչում թուրքական գյուղերի ներկայացուցիչներին և հայտնում հայկական կառավարության որոշումը՝ զինաթափել ՀՀ տարածքում ապրող ժողովրդին, պահանջելով երեք օրվա ընթացքում հանձնել ունեցած զենքերը և հարկերը, հակառակ դեպքում սպառնալով ռմբակոծել գյուղերը («Զանգ» 1918): Սակայն անցնում է 3 օր և թուրքերը պատրաստակամություն չեն արտահայտում հպատակվել հայկական իշխանություններին, ինչն էլ դրդում է պատժիչ զորամասին անցնել գործի և ռմբակոծել Մ. Մազրա գյուղը, որից հետո մահմեդական բնակչությունը, թնդանոթի ձայնից ահաբեկված սպիտակ դրոշով ներկայանում է Տ. Բաղդասարյանին, հանձնելով զենքը և հարկերը, այդ թվում 20000 ռուբլի և 400 զենք, խոստանալով տալ նաև պետական հացահատիկը, որից հետո պատժիչ զորամասը, 1918 թ. նոյեմբերի 12-ին հեռանում է Երևան («Զանգ» 1918):

Եվ այսպես, հայկական զորքերի հայտնվելու սպառնալիքի վտանգի տակ տեղական թաթարները համաձայնվում են հպատակվել իշխանություններին՝ հանձնելով 450 հրացան, որի հետ միասին ներկայացվում է չվճարված հարկերի հանձնման պահանջը: Այդ հանգամանքին ավելանում է նաև սովալլուկ և գազազած գաղթականության առկայությունը թաթարական բնակավայրերի մոտ («Кавказское слово» 1918):

1919 թ. հունվարի 31-ին Նոր Բայազետի գավառական կոմիսար Շահինյանը Հայաստանի տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարին ուղղված հեռագրում հայտնում էր, որ մոտ 1000 զինված փախստական հայեր Բասարգեչարի շրջանում հարձակումներ են կատարում մահմեդական գյուղերի վրա, որի պատճառով այնտեղ է ուղարկվել միլիցիայի պետը (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 4): Փետրվարի 6-ին նրանցից ստացված պատասխան հեռագրում, պահանջվում էր անհապաղ վճռական միջոցներ ձեռնարկել կանխելու անկարգությունները և մեղավորներին ենթարկել դատական խիստ պատասխանատվության (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 8): Սակայն, դատելով փաստաթղթերից, իրադարձությունները դուրս են եկել վերահսկողությունից և սկսել են այլ սցենարով զարգանալ:

ՀՀ Արտգործնախարարի 1919 թ. փետրվարի 18-ի հեռագրում, ուղղված վարչապետին, ըդգծվում էր. «...տեղական ադմինիստրացիան ցույց է տվել հանցավոր անփութություն և ապիկարություն» (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 110): Սակայն այդ ամենը բացատրել միայն վարչակազմի անճարակությամբ, կլինի միակողմանի, քանզի այդ իրադարձությունները ունեին նաև սոցիալ-տնտեսական շարժառիթներ, որոնք լրացուցիչ ազդակ հանդիսացան դեպքերի անցանկալի ընթացքի համար, ինչից էլ օգտվեցին Ադրբեջանի հավակնոտ մահմեդական առաջնորդները, որը խթանվեց 1919 թ. հունվարի վերջերին Բասարգեչարի շրջանի փախստական և սովալլուկ հայերի հուսահատ քայլերով, որոնք հարձակվում են թաթարաբնակ Վերին Ջագալու, Ղըզըլ-Վանք և Սուբբուտան բնակավայրերի վրա, որի հետևանքով թաթարները փախչում են հարևան գյուղերը: Վարչակազմի և հեծյալ դիվիզիոնի ռոտմիստր Ալեքսանդր Սիլիկյանի ձեռնարկած քայլերի շնորհիվ փախստականները հանդարտվում են և մասամբ զինաթափվում, թաթարական գյուղերը ազատվում են այն գրաված փախստականներից, վարչակազմը սկսում է թաթարներին վերադարձնել կողոպտված ունեցվածքը և ձեռնամուխ լինում մեղավորներին պատասխանատվության ենթարկելուն, հեծյալ դիվիզիոնի հրամանատար ռոտմիստր Ալ. Սիլիկյանը և կոռնետ Խաչատուրովը թաթարների հետ գնում են գյուղերը՝ բնակիչներին հանդարտեցնելու (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 115): Իրադարձությունները սակայն արդեն դուրս էին գալիս Բասարգեչար գյուղից և դարձել ազգամիջյան փոխհարաբերություններում լարվածության պատճառ, որը բարդացել էր Ադրբեջանի սահմանի մոտիկության հետևանքով, ինչի մասին հեռագրել էր ռոտմիստր Ալ. Սիլիկյանը գեներալներ Մովսես Սիլիկյանին և Դանիել Բեկ-Փիրումյանին (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 22):

1919 թ. փետրվարի 12-ին Նախարարների խորհրդում լսվում է Արտգործնախարարի զեկուցումը Ադրբեջանի Արտգործնախարարի հեռագրի մասին, որով վերջինս բողոքել էր հայկական զորամասերի գործողություններից Սևանա լճի մո-

տակայքում, որոնք անցնելով Ադրբեջանի սահմանը իբր թե հարձակվել էին մի քանի թուրքական գյուղերի վրա, կատարել ճնշումներ ու հափշտակություններ: Վերջինս պահանջել էր նման երևույթների դեմն առնել և մեղավորներին դատել, խնդրելով հակառակ դեպքում Ադրբեջանի կառավարության անունից իրենց պատասխանատու չհամարել թուրք ազգաբնակչության կողմից սպասվող գործողությունների համար: ՀՀ Նախարարների խորհուրդը այդ կապակցությամբ ընդունված որոշման մեջ ընդգծել էր. «Ի նկատի ունենալով Զինվորական նախարարի զեկուցումը, որ հեռագրում մատնանշված շրջանում հայկական զորամասեր չկան, որ դա կարող է մասնավոր [մահմեդական ավազակաբարո] «խումբերի» հարձակում լինել, Ներքին Գործերի նախարարին հանձնարարական է տալիս անհապաղ խիստ քննություն նշանակել՝ հեռագրի մեջ հիշված հարձակումների և ճնշումների իսկությունը պարզելու և հանցավորներին պատասխանատվության ենթարկելու համար» (ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.96, թ.25: ֆ.199, ց.1, գ.100, թ.26: ֆ.201, ց.1, գ.486, մաս I, թ.37):

Հարկ է սակայն նշել, որ այս կապակցությամբ արևելագետ Դ.Կնյազյանը հակառակ տեսակետն է պաշտպանում, նշելով, որ Բասարգեչարի շրջանում իրադրության սրման պատճառը եղել է հայկական կողմը՝ ի դեմս արևմտահայ գաղթականների, որոնք մնացել էին անօթևան և անսնունդ: Դ.Կնյազյանը գտնում է, որ Երևանից եկած զորամասը գաղթականներին հանեց մուսուլմանական գյուղերից և ռոտմիստր Ալ.Սիլիկյանի անպատասխանատու վարքագիծը պատրվակ է դարձել մուսուլմանների ընդվզման համար և զորքի կոտորմանը (ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.263, թ.4, 6, 9–10, 15, 34, 44: «Արև», 1919): Այդ ամենն էլ հանգեցրեց լարվածությանը և Ադրբեջանի տարածքից զինված խմբերի ներթափանցմանը ՀՀ տարածք և զենքի առաքմանը ապստամբներին: Սկսվեցին նախապատրաստություններ Ճամբարակը և Բաշքենդը գրավելու համար, զուգահեռ զորահավաք հայտարարվեց, որում Ադրբեջանին օգնության եկան 1000-ի չափ վրացի սպաներ (ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.263, թ.47, 54–55, 60: Ֆ.200, ց.1, գ.294, թ.77):

Հարկ է նշել, որ ՀՀ-ի համար դրական էր այն, որ խնդրի կարգավորման մեջ բրիտանական հրամանատարությունը և նրա ռազմաքաղաքական ներկայացուցիչը Հայաստանին գործնականում աջակցեցին, ի տարբերություն նրանց կողմից Լեռնային Ղարաբաղում, Զանգեզուրում և այլուր ցուցաբերած բացահայտ պրոադրբեջանամետ դիրքորոշման, և դրանով իսկ նպաստեցին ՀՀ տարածքային ամբողջականության պահպանմանը Զոդ-Բասարգեչարի շրջանում. միջադեպը նաև հստակ ցույց տվեց, որ Ադրբեջանը այս կամ այն կերպ բոլոր միջոցներով հավակնում էր բոլոր այն հայկական շրջաններին, որտեղ կար համահավաք մուսուլմանական բնակչություն («Кавказское слово» 1919. «Единая Россія» 1919):

1919թ. փետրվարի 18-ին ՀՀ Նախարարների խորհուրդը իր հերթական նիստում լսում է այս խնդրի մասին՝ կապված Բասարգեչարի շրջանում մահմեդական շարժման ակտիվացման հետ և հանձնարարում է ՆԳ նախարարին քննություն կատարել տեղական վարչակազմի գործունեության մասին (ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.100 թ.28; ֆ.199, ց.1, գ.96, թ.27): Շուտով ավելանում են նոր փաստեր, որոնք հիմք են տալիս կառավարությանը գալ ավելի իրատեսական և ամբողջական պատկերա-

ցումների Զոդի շրջանում առաջացած խնդրի վերաբերյալ: Դա հստակորեն երևում է Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանի 1919 թ. փետրվարի 18-ի պաշտոնագրից (№305)՝ ուղղված վարչապետին. «Ադրբեջանի կառավարության միջամտության առիթ դարձած Բասարգեչարի շրջանի անցքերը որոշ չափով արդեն պարզվել են: Բացի մասնավոր անհատներից, որոնք կատարիլ են այդ հանցագործությունը, և կրելու են օրինական պատիժը, ես հարկ եմ համարում կառավարության հատուկ ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ ըստ կարևորության, տեղական վարչակազմը ցույց է տվել հանցավոր անփութություն և ապիկարություն: Անհրաժեշտ եմ համարում, որ այդ կառավարիչները խիստ դատի կանչվին, պատժի ենթարկվին, և թերևս հեռացվեն պետական պաշտօնեությունից, իսկ ռոտմիստր Ալ. Սիլիկյանը, որի միջամտությամբ է վերականգնվել կարգն ու խաղաղությունը, արժանացվի շնորհակալության: Խնդրում եմ մատակարարել ինձ մանրամասն և ստույգ տեղեկություններ անցքի [Զոդում մահմեդական ելույթները – Վ.Վ.] շարժառիթների, բնույթի մասին, որպեսզի կարողանամ իրազեկ առնել թե՛ բրիտանական գլխավոր հրամանատարությանը, և թե՛ Ադրբեջանի կառավարությանը» (ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.100, թ.28, գ.20, թ.31):

ՀՀ արտաքին գործերի նախարարի փետրվարի 18-ի հեռագրից՝ ուղղված Ադրբեջանի արտաքին գործերի նախարարին, պարզ է դառնում, որ փետրվարի կեսերին հայկական զինուժի ձեռնարկված եռանդուն գործողությունների հետևանքով, որին մասնակցել էին նաև տեղական վարչակազմը և Ներքին գործերի մարմինները, թաթարները հետ էին շպրտվել դեպի իրենց բնակավայրերը, նրանց կողմից կողոպտված ունեցվածքը Զոդի շրջանում ետ է վերադարձվել, իսկ մեղավորները սկսել են քննվել՝ դատական կարգով պատասխանատվության ենթարկելու համար (ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.211, մաս I, թ.27): Արտգործնախարարության սույն գրությունը Բասարգեչարի շրջանի դեպքերի քննություն կատարելու մասին, ուղարկվում է ՀՀ ներքին գործերի նախարարին (ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.20, թ.35):

Փետրվարի 24-ին ռոտմիստր Ալ. Սիլիկյանը դիվիզիոնի հետ գնում է Մազրա գյուղը, որտեղ թաթարները ներկայանում են աղ ու հացով, վստահեցնելով, որ իրենք արդեն հանդարտվել են: Երեկոյան Ալ. Սիլիկյանը գնում է Բասարգեչար, և փետրվարի 25-ի առավոտյան հեծյալ դիվիզիոնի 1-ին էսկադրոնով և 2-րդ էսկադրոնի մի մասով վերադառնում Փոքր Մազրա գյուղը: Փետրվարի 26-ի առավոտյան 1-ին էսկադրոնը ռոտմիստր Ալ. Սիլիկյանի և կոռնետ Խաչատուրովի հետ կրկին վերադառնում են Բասարգեչար գյուղը, իսկ դիվիզիոնի հրամանատար Ալ. Սիլիկյանը իր համիարզ Շիմկևիչի հետ միասին կես էսկադրոնով մեկնում է Զոդ, որտեղ իջևանում են Ագիլյար Սամանդ Աղա Քեսմանսկի անունով թաթարի մոտ:

Այստեղ ռոտմիստր Ալ. Սիլիկյանը գյուղացիներին հայտարարում է, որ դիվիզիոնի համար թաթարները պետական գներով նախապատրաստեն խոտ, ցորեն և գարի: Թաթարները խոստանում են խորհրդակցել և առավոտյան պատասխանել: Փետրվարի 27-ի առավոտյան, Զոդ գյուղի պատվելիները հայտարարում են ռոտմիստր Ալ. Սիլիկյանին, որ հրաժարվում են տալ պահանջվող անասնակերը և հացը: Ռոտմիստր Ալ. Սիլիկյանի համառ պահանջները ազդանշան դարձան թաթարների կողմից նախահարձակ լինելու: Գյուղի թաթարների տներում տեղա-

բաշխված զինվորները՝ թվով 11 մարդ դավադրաբար սպանվում են, այդ թվում Ջոդի թուրքերի կողմից իրենց տներում «հյուրընկալված» դիվիզիոնի 4 սպաները՝ համհարզ կոռնետ Շիմկևիչը, կոռնետ Խաչատրյանը, ռոտմիստր Ալ. Սիլիկյանը և նրա կրտսեր եղբայր Արշակ Սիլիկյանը (սպաները այդ գիշեր հանգրվանում են Սամեդ աղա Քյասամանսկու տանը), որոնց գլխատում են և ծաղրուծանակով ցուցադրում շրջակա մուսուլմանական գյուղերում (Գրիգորյան, Բորոխյան 2022, 113):

Փետրվարի 28-ին ՀՀ Տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարը Նոր Բայազետի գավառական կոմիսարին հրահանգ է տալիս տեղամասային քննիչի հետ անձամբ գնալ դեպի վայրը, անցկացնել հետաքննություն, պարզել մեղավորներին և տեղամասային տեսուչի, հասարակական գյուղական կոմիսարների, միլիցիոներների ներկայությամբ ու մասնակցությամբ ձերբակալել նրանց, անհրաժեշտության դեպքում դիմելով նաև զորքի օգնությանը, չթույլատրելով սակայն գործին ներգրավել մահմեդական փախստականներից ներկայացուցիչ՝ խուսափելով նոր խռովության հրահրման վտանգից և բռնություններից: Միաժամանակ ՆԳՆ հանձնարարությամբ դեպքի վայրն է գործուղվում դատախազի օգնականը՝ հետաքննությունը ղեկավարելու և կարգ ու կանոնը վերականգնելու համար (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1 , գ. 263, թ. 115):

1919 թ. մարտի 1-ին Նախարարների խորհրդի նիստում լսվում է ներքին գործերի նախարարի զեկուցումը Բասարգեչարի շրջանի Ջոդ գյուղում տեղի ունեցած դեպքերի մասին, որը վերաբերում էր Ղարաբաղի հեծյալ գնդի սպաների և զինվորների սպանությանը: Հանգամանալից քննարկելով ստեղծված իրադրությունը, Նախարարների խորհուրդը որոշում է կազմել մի արտակարգ քննիչ հանձնաժողով Արդարադատության նախարարության ներկայացուցիչների նախագահությամբ, և Զինվորական և ՆԳ նախարարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, հանձնարարում անմիջապես քննություն կատարել տեղի ունեցած դեպքերի մասին. 1) Արտակարգ քննիչ հանձնաժողովը կազմվում է ՀՀ դատախազի օգնականի նախագահությամբ, հատուկ գործերի քննիչից և Ներքին Գործերի ու Զինվորական նախարարությունների մեկական ներկայացուցչից, 2) Արտակարգ քննիչ հանձնաժողովը ուղարկվում է Նոր Բայազետի գավառի Ջոդ գյուղում փետրվարի վերջերին տեղի ունեցած դեպքերի պատճառները քննելու համար, որի հետևանքը եղել է հեծյալ դիվիզիոնի 4 սպաների և մոտ 80 զինվորների սպանությունը, պարզելու մեղավորների անձնավորությունները և բանտարկելու ու Նոր Բայազետի բանտն ուղարկելու այն անձանց, ովքեր որևիցե առնչություն են ունեցել այդ հանցագործության հետ, 3) թուրքերի կողմից՝ հայերի բռնությունների մասին գանգատներ լինելու դեպքում Արտակարգ քննիչ հանձնաժողովը պարտավորվում է քննել և այդ գանգատները, պատասխանատվության ենթարկել մեղավորներին, 4) քննության նորմալ պայմաններ ստեղծելու նպատակով հանձնաժողովի տրամադրության տակ դնել բավականաչափ միլիցիոներական և զինվորական ուժեր (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 100, թ. 34: ֆ. 199, ց. 1, գ. 96, թ. 33: ֆ. 201, ց. 1, գ. 486, մաս I, թ. 58):

Հայկական կառավարությունը ջանք չխնայեց խուսափելու թաթարների հետ ռազմական առճակատումից: Այդ մասին շեշտում է շտաբս-ռոտմիստր Կուդրյավ-

ցևը Նոր Բայազետից 1919 թ. մարտի 5-ին Երևան՝ գեներալ-մայորներ Մ. Սիլիկյանին, Դ. Բեկ-Փիրումյանին և ՀՀ Տարածքի կոմիսարին ուղարկված հեռագրում, որում նշվում է, որ մարտի 4-ին ժամը 20-ին գավառային կոմիսար քںնիչի հետ մեկնել են թաթարաբնակ այդ շրջանը՝ միջադեպը հարթելու համար, սակայն նրանց դիմավորել են հրացանազարկով: Կուդրյավցևը համալրում էր խնդրում և բողոքում պարենամթերքների պակասից՝ ընդգծելով, որ առանց թնդանոթների խնդիրն անլուծելի է և մեծ կորուստների կհանգեցնի, (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 64, թ. 3):

Գեներալ Մ. Սիլիկյանին ուղղված մարտի 5-ի հեռագրում գավառային կոմիսար Շահինյանը, անդրադառնալով այդ տագնապալից վիճակին, անհրաժեշտ էր գտնում մահմեդականներին օրինական իշխանություններին ենթարկեցնելու համար ուղարկել պատժիչ ջոկատ՝ թնդանոթներով հանդերձ, ավելացնելով նաև, որ Ղարաբաղյան դիվիզիոնում կա ընդամենը 200 սվին, իսկ հրետանարկեր բոլորովին չկան (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 27, թ. 85): Ի պատասխան՝ զինվորական նախարար, գեներալ-մայոր Հովհաննես Հախվերդյանը 1919 թ. մարտի 7-ին այս գրությունը ուղարկելով ՀՀ վարչապետին, միաժամանակ անհրաժեշտ գտավ Նոր Բայազետ ուղարկել մեկ գումարտակ և երկու թնդանոթ՝ հաշվի առնելով թաթարների հնարավոր դիմադրությունը: Զինվորական նախարարը տեղեկացրել էր նաև, որ գնդապետ Քլ. Թեմպերլին իր հետ զրույցում համաձայնել է տվել զինված ուժի օգտագործմանը, եթե թաթարները Քںնչական հանձնաժողովին չթույլատրեն մեկնելու դեպքի վայրը:

Անդրկովկասում բրիտանական զորքերի Հրաձգային բրիգադի 4-րդ գումարտակի համարզ կապիտան Քլ. Թեմպերլիին դեռևս 1919 թ. հունվարի 7-ին գեներալ Ջորջ Ֆորեստիեր-Ուոքերի հուշագրի համաձայն նշանակվել էր Կարսի բրիտանական զինվորական նահանգապետի պաշտոնում՝ փոխգնդապետի կոչումով, ում հանդեպ 1919 թ. փետրվար – մարտ ամիսներին մահմեդական բնակչությունը ցուցաբերեց անպատկառ վերաբերմունք, որն անհանդուրժելի դարձավ, մահմեդականները ամեն ինչ արեցին անտեսելու վերջինիս, որին սակայն Հովհ. Քաջազնունու կառավարությունը սկզբնապես անվանում էր «մեծամիտ և անպատկառ անգլիացի», որը Կարսում Շուրայի՝ պաշտոնապես Հարավարևմտյան Կովկասյան ժամանակավոր կառավարության հետ համաձայնության գալով, ընդդիմացել էր հայ վարչակազմի աշխատողներին պաշտոն հատկացնելու ամեն մի փորձի և նույնիսկ խիստ պահանջներ ներկայացրել Ալեքսանդրապոլի՝ Կարսը և Թիֆլիսը շաղկապող գլխավոր երկաթուղային հանգույցի հայ պաշտոնյաներին (Великая Октябрьская революция 1957, 256 – 258: Деникин 1925, 147: Հովհաննիսյան 2005, 220 – 223):

1919 թ. հունվարի 26-ի դրությամբ Քլ. Թեմպերլին Կարսի բրիտանական զինվորական նահանգապետն էր եղել, որին աջակցելու համար Կարսում էր գտնվում 4-րդ բրիգադի հրաձիգների գնդապետ Ֆրեդերիկ Լաթընի գլխավորած նախնական թիկնազորի հետ վերամիավորված գումարտակի գլխավոր մարմինը: Դրանից հետո, 1919 թ. մարտի 2-ին Քլ. Թեմպերլին տեղափոխվել է Երևան՝ որպես զինվորական ներկայացուցիչ:

Երևանում ծառայելու ժամանակ Քլ. Թեմպերլիի վերաբերմունքը դեպի հայերը որոշակի փոփոխություն է կրում, ինչն արտահայտվում է նրա կողմից 27-րդ

զորաբաժնի սպայակույտ ուղարկված զեկույցներում: Դրանցում Քլ.Թեմպերլեյը մտահոգություն էր հայտնել հայկական կառավարության առաջ կանգնած դժվարությունների առթիվ: Նա հաճախակի փորձել էր խաղաղեցնել մահմեդական բնակավայրերի բնակչությանը, որոնք մերժում էին Երևանի իրավասությունը: Այդ ընթացքում մարտի 10-ի մոտերքը խռովարարական քայլերի դիմած Վեդիչայ-Սադարակի մահմեդականներին հանդարտեցնելու համար Քլ.Թեմպերլին զգալի ջանքեր գործադրեց՝ փորձելով կանխել հայերի հաճախակի դարձած սպանությունները և թալանը: Քլ.Թեմպերլին փորձեց զսպել ոտքի ելած ցեղապետերին ու խաներին, որը սակայն ոչ մի հաջողություն չունեցավ: Քլ.Թեմպերլիի եզրահանգմամբ, այդ խռովությունը սոսկ առանձին միջադեպ չէր, քանի որ զորակոչը Սադարակի շրջանում կապված էր Արալըխի, Կաղզվանի և Կարսի համանման երևույթների հետ, իսկ գնդապետ Լաթընը բնութագրել էր որպես Շուրայի հետ մի ընդհանուր հակահայկական շղթա կազմած անզիջում դիրքորոշում ունեցող շրջանի: Քլ.Թեմպերլիի և Լաթընի զուսպ ջանքերը և փորձերը պատժելու հանցագործ մահմեդական գյուղերին հանցավոր-թալանչիական գործողությունների համար՝ անհաջողության մատնվեցին, քանզի այդ գյուղերի բնակիչները պատասխանեցին բացեիբաց զենքի դիմելով, որն արդեն չարագուշակ խռովարարության նշան էր, որին նպաստեց թուրքական քարոզչությունը: Այն Արաքսով Մակուից և Արալըխից տարածվում էր Սադարակի շրջանում՝ գրգռելով մահմեդական բնակչությանը Բոյուք-Վեդիից մինչև Նախիջևան: 1919թ. ապրիլի 28-ին Քլ.Թեմպերլեյը Զորավար Անդրանիկի և մայոր Ուիլյամ Գիբբոնի ընկերակցությամբ մեկնում է Թիֆլիս, և մայիսի 1-ին ստանում Հրաձգային բրիգադի 4-րդ գումարտակի ժամանակավոր հրամանատարությունը (Հովհաննիսյան 2005, 231, 252, 257), ինչին և հաջորդում է նրա գործունեությունը Զոդ-Բասարգեչարի շրջանում:

Կառավարության և զինվորական իշխանությունների որդեգրած կուրսի մասին կարելի է հստակորեն դատել նաև մեկ այլ փաստաթղթից. հայկական առանձին դիվիզիայի պետ գեներալ-մայոր Մ.Սիլիկյանը 1919թ. մարտի 7-ին շտապ գաղտնի զեկուցագրով դիմում է ՀՀ զինվորական նախարարին, որում անդրադառնալով նաև զոդյան խնդրին՝ նշում է գնդապետ Ալ.Շնեուրի հաղորդած տեղեկության մասին, ըստ որի Սեմյոնովյան լեռնանցքը ծածկված է ձյունով, իսկ գեներալ Դ.Բեկ-Փիրումյանը դեռևս գտնվում է Նոր Բայազետում, սպասելով նոր զորաջոկատի ժամանմանը, որպեսզի վճռաբար խոսի, հակառակ դեպքում տպավորությունը թույլ կլինի, քանզի վերջիններս կազմակերպվում են: Մ.Սիլիկյանն ընդգծել էր, որ ըստ գեներալ-մայոր Դ.Բեկ-Փիրումյանի, թաթարների հետ բախումն անխուսափելի է (ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.64, թ.2):

Զոդ գործուղված Արտակարգ քննիչ հանձնաժողովին տրված հրահանգում, որի տակ ստորագրել էին արդարադատության նախարար Հարությունովը, ՆԳ նախարարի պաշտոնակատար Մանասյանը և զինվորական նախարար Հովի. Հախվերդյանը, ասվում էր, որ հանձնաժողովը գործուղվում է Նոր Բայազետի գավառի Զոդ գյուղը՝ փետրվարի վերջերին տեղի ունեցած իրադարձությունների հանգամանքները հետաքննելու, որի հետևանքով սպանվել են Ղարաբաղյան հեծյալ դիվիզիոնի 4 սպա և 30 զինվոր, պարզելով նաև մեղավորների անձերը, այդ

հանցագործության հետ առնչվող բոլոր հանգամանքները: Հրահանգում նաև ասվում էր, որ եթե կլինեն հայտարարագրեր նաև թաթարների կողմից՝ հայերի կողմից թույլ տված բռնությունների մասին, ապա քննչական հանձնաժողովը պարտավոր է հետաքննել այդ բողոքները և մեղավորներին պատասխանատվության ենթարկել (ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.64, թ.4):

Արտակարգ քննիչ հանձնաժողովը մարտի 8-ին ժամանում է Բասարգեչար: Արտակարգ քննիչ հանձնաժողովը երկու մահմեդականի է ուղարկում Զոդ՝ առաջարկելով մարտի 10-ին ներկայանալ Բասարգեչար՝ տեղի ունեցածի հանգամանքները պարզելու, քննության կարգը հաստատելու և սահմանված կարգով քննչական գործառույթը վարելու համար: Բանակցություններն ընթանում են մարտի 11-ին Մազրա գյուղում: Արտակարգ քննիչ հանձնաժողովը առաջարկում է հանձնել սպանված սպաների և զինվորների դիերը, ունեցվածքը, զենքերը, ձիերը, փաստաթղթերը, դիվիզիոնի դրոշը, վերապահություն անելով, որ միայն այդ դեպքում Քննչական հանձնաժողովը կհամաձայնվի մտնել Զոդ գյուղը՝ գործի պատճառների, շարժառիթների և հետևանքների անաչառ ու օբյեկտիվ հետաքննությունը անցկացնելու: Արտակարգ քննիչ հանձնաժողովը իր բարոյական պատիվը համարեց նաև ընդգծելու, որ այդ ամենն անհրաժեշտ է, որպեսզի խուսափեն մասնավորապես ռազմական ուժի գործադրումից:

ՀՀ կառավարությունը պաշտոնագրով դիմում է Երևանում գտնվող Բրիտանական զինվորական ներկայացուցչությանը, որը մարտի 12-ին իր սպային է գործուղում Բասարգեչար, որպեսզի անձամբ համոզվի, թե ինչքանով են օրինական հայկական իշխանությունները մահմեդական համայնքի նկատմամբ և ինչքանով են պատճառաբանված հայկական իշխանությունների ձեռնարկած գործողությունները (ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.263, թ.115):

1919թ. մարտի 17-ին ՀՀ Նախարարների խորհուրդը անդրադառնում է Բասարգեչար-Զոդյան խնդրին, լսելով վարչապետի զեկուցումը Զոդ գյուղը պատժիչ զորամաս ուղարկելու մասին: Նիստում որոշվում է. 1) Քննիչ հանձնաժողովը թողնել տեղում, որպեսզի հնարավորություն ստեղծվելուն պես նա անմիջապես անցնի գործի, 2) հանձնարարել Զինվորական նախարարին կարգադրություն անելու գեներալ Դ.Բեկ-Փիրումյանին, որ նա հարկ եղած դեպքում անմիջապես իր հայեցողությամբ, որոշակի նախապատրաստություններ տեսնելուց հետո՝ զինվորական ուժը շարժի դեպի ապստամբ վայր (ՀԱԱ, ֆ.201, ց.1, գ.486, մաս I, թ.69: ֆ.199, ց.1, գ.96, թ.45): Մարտի 17-ին դեպքի վայր է ժամանում Բրիտանական զինվորականության ներկայացուցիչ գնդապետ Ք.Թեմպերլին և լսելով Արտակարգ քննիչ հանձնաժողովի զեկույցը, թաթարների միջոցով նամակ է ուղարկում՝ պահանջելով թաթարների ներկայացուցիչներին անհապաղ ներկայանալ Բասարգեչար՝ բանակցությունների համար, սակայն բանագնացները չեն վերադառնում, և ստիպված բրիտանական սպան ետ է վերադառնում (ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.263, թ.115): Այդ ընթացքում թաթարները Զոդի շրջանում կենտրոնացնում են զգալի ուժեր՝ զինված հրացաններով ու գնդացիրներով, նախապատրաստվելով ռազմական գործողությունների, նախօրոք տարհանելով իրենց ընտանիքներին, ունեց-

վածքը, երեխաներին, և շրջակա գյուղերի խոռվարարներին կենտրոնացնելով Զոդի շրջանում (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 115):

1919 թ. մարտի 20-ին քննարկվում է մինիստր-նախագահի զեկուցումը Զոդի դեպքերի առթիվ: Ընդունված որոշման մեջ Նախարարների խորհուրդը հանձնարարում է. ա) Հայտագիր ուղարկել Ադրբեջանի կողմից հայկական սահմանը զինված խմբեր ուղարկելու և անցնելու առթիվ, բ) հանձնարարել Զինվորական նախարարին գեներալ Դ. Բեկ-Փիրումյանին կարգադրելու, որ վերջինս Նոր Բայազետից դուրս գալուց առաջ ուղիղ հեռագրալարով կապվի Երևանի հետ, գ) հանձնարարել Արտգործնախարարին՝ Զոդի դեպքերի մասին հրապարակում տալ մամուլում (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 100, թ. 48):

Հարցի որոշ կարևոր մանրամասներ՝ կապված Զոդի շրջանում մահմեդական շարժման ակտիվացման հետ, ակնհայտ են դառնում նաև ՀՀ Արտաքին Գործերի նախարարի 1919 թ. մարտի 22-ի հեռագրից՝ ուղղված Ադրբեջանի Արտաքին Գործերի նախարարին (պատճենը՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին՝ Բաքվում): Դրանում ՀՀ Արտգործնախարարը շեշտել էր, որ Զոդ գյուղի շրջանում սպանել են 4 հայ սպայի և Ղարաբաղյան երկրորդ հեծյալ դիվիզիոնի ավելի քան 10 զինվորի, ընդգծելով, որ կառավարության ուղարկած Քննչական հանձնաժողովին դիմավորել են հրացանային համազարկով, և իշխանություններին հակառակվելը օժանդակվել է Ադրբեջանից ժամանած զինված խմբերի կողմից: ՀՀ Արտգործնախարարը միանգամայն անթույլատրելի գտնելով զինված անձանց անցումը Ադրբեջանից ՀՀ տարածք, ընդգծել էր, որ կառավարության հանձնարարականով ինքը եռանդուն բողոքում է նման գործողությունների դեմ և խնդրում շտապ կարգադրություններ անելու, որպեսզի Ադրբեջանի քաղաքացիներին ետ պահեն զինված ելույթներից և Հայաստանի տարածքում կարգը խախտելուց (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 211, մաս I, թ. 62: Ֆ. 199, ց. 1, գ. 73, թ. 45):

Զոդյան հանգույցը խնդիրներ է ստեղծում հայ-ադրբեջանական ողջ սահմանի երկայնքով, վառոդալիցք դառում դիվանագիտական հարաբերություններում, ուժեղացնելով լարվածությունը սահմանային շրջանների Ներքին Գործերի մարմինների և միլիցիայի աշխատանքներում: Ինչպես պարզվում է գեներալ Բաղդասարովի Ղարաքիլիսայից Երևան՝ գլխավոր հրամանատարին ուղարկված 1919 թվականի մարտի 21-ի հեռագրից, որը հենված էր ստացված գործակալական հետախուզական տվյալների վրա, իրավիճակը վատացել էր նաև Բաշքենդի շրջանում՝ կապված Զոդում կատարված սպանությունների հետ: Հեռագրում հաղորդվում էր այն մասին, որ թաթարները նախապատրաստվում են, գյուղերում տեղի են ունենում հավաքներ՝ Զոդի իրենց հայրենակիցներին օժանդակելու նպատակով, որ Ադրբեջանի Գեդաբեկի շրջանից ուղարկվել է 200 մարդ, իսկ Զեգամի կիրճով անցկացվել է երկու թնդանոթ և երկու գնդացիր, չեն կարողացել տեղափոխել մեկ լեռնային թնդանոթ, որը թողել են Շախթալա գյուղում, ընդգծելով նաև մի հետաքրքիր մանրամասնի մասին, որ նշանառուները ռուսներ և վրացիներ են (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 48):

1919 թ. մարտի 24-ին շտաբս-կապիտան Մկրտիչյանը դիվիզիայի հրամանատարին ուղղված հեռագրում (պատճենը՝ Քարվանսարայում գտնվող գեներալ Նի-

կոլայ Բաղդասարովին) հայտնում էր, որ ստուգված տվյալների համաձայն թաթարները Շախթալա գյուղն են բերել դաշտային թնդանոթ, իսկ այնտեղ գտնվող լեռնային թնդանոթը Ջիլ գյուղով տարել են դեպի Զոդ: Մկրտիչյանը հեռագրի վերջնամասում նաև ավելացրել էր, որ առանց թնդանոթների տեղական ուժերը ի վիճակի չեն դիմադրելու և խնդրում էր անհապաղ կարգադրություններ անել՝ ինչպես գործել (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 55):

Հայկական դիվիզիայի հրամանատարին ուղղված 1919 թվականի մարտի 27-ի հեռագրում շտաբս-կապիտան Մկրտիչյանը Քարվանսարայից հայտնում էր, որ ստացված տեղեկությունների համաձայն Աղստևի աջ վտակ Թարսաչայի (Գետիկ) կիրճի թաթարները ցորեն և գարի են տեղափոխում Զոդ, և որ մարտի 25-ին բերվել է 300 փութ՝ Դիլիջանով դեպի Չիբուխլու (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 66): Այս ընթացքում հայկական թե՛ քաղաքացիական, թե՛ զինվորական և թե՛ ՆԳ մարմինները նախապատրաստություններ են տեսնում, զբաղվում զորուժի կազմակերպմամբ, համալրում զենքի ու զինամթերքի պակաս պաշարները, զորակոչային խնդիրներ լուծում: Դ. Բեկ-Փիրումյանի կողմից 1919 թ. մարտի 18-ին Նոր Բայազետից զինվորական նախարարին ուղարկված հեռագրում հայտնվում էր, որ ավարտին է մոտ զորաջոկատի կենտրոնացումը, իսկ համալրումը կավարտվի մարտի 28-ին: Ավելացվում էր, որ ռազմական հետախուզությամբ հաստատվել է, որ Զոդի շրջանում կուտակվել են մինչև 6 հազար զինված թաթարներ՝ գնդացիրներով և հեծելակով, ինչի մասին տվյալները դեռ ստուգվում են (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 64, թ. 5):

ՀՀ Նախարարների խորհրդի 1919 թ. մարտի 22-ի նիստում լսվում է Զինվորական նախարարի զեկուցումը Նոր Բայազետի գավառում զինվորական դաշտային դատարան հիմնելու մասին: Որոշվում է բացառությամբ մահվան պատժի, օրինագիծը հաստատել և ի կատար ածել (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 100, թ. 51): 1919 թ. ապրիլի 2-ին ՀՀ Նախարարների խորհրդում լսվում է Զինվորական նախարարի զեկուցումը Զոդ գյուղի խնդիրների մասին և որոշվում է հանձնարարել Զինվորական նախարարին կարգադրել գեներալ Դ. Բեկ-Փիրումյանին, որ նա գործի գնդապետ Ք. Թեմպերիի հետ համերաշխությամբ, գործի դնելով բոլոր հնարավոր միջոցները միջադեպը խաղաղ կերպով հարթելու՝ խուսափելով ռազմական ուժի գործադրումից: Միաժամանակ հերքվում է Ադրբեջանի կառավարության ստահոդ պնդումը Զոդ գյուղի ադրբեջանական պատկանելիության մասին, հատուկ ընդգծելով, որ այն մտնում է Հայաստանի Հանրապետության կազմի մեջ (ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 486, մաս I, թ. 81: ֆ. 199, ց. 1, գ. 100, թ. 54, գ. 96, թ. 58: ֆ. 200, ց. 1, գ. 26, թ. 58):

Այս ընթացքում, բնականաբար, Հայկական կառավարությունը ձգտում էր բոլոր հնարավոր դիվանագիտական միջոցները օգտագործել միջադեպը խաղաղ վերջացնելու համար: Միաժամանակ, ձեռնարկվում էին ռազմաքաղաքական, ոստիկանական որոշակի միջոցառումներ ամրապնդելու Հայաստանի համար ռազմավարական մեծ նշանակության Սևանա լճի ավազանը և Նոր Բայազետի գավառը, ուր և գտնվում էր չարաբաստիկ Զոդյան հանգույցը: Այդ շրջանում գործելու պատիվը վստահված Ղարաբաղյան հատուկ գումարտակի ղեկավարությունը

վստահվեց գեներալ-մայոր Դ. Բեկ-Փիրումյանին և այդ ժամանակ դեռևս փոխգնդապետ Ալ. Շնեուրին որպես շտաբի պետ, որը Զոդյան օպերացիայի ողջ ընթացքում ղեկավարեց նաև հետախուզական ծառայությունը, 1918 թ. դեկտեմբերի 31-ից սկսած Ալ. Շնեուրը արդեն Առանձին Ղարաբաղյան բրիգադի պետն էր (ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 104, թ. 53, Ավետիսյան Հ. 1997, 223, ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 129, թ. 6–7): Գնդապետ Քրիստափոր Արարատյանի դիմումագրում՝ ուղղված գեներալ–մայոր Մ. Սիլիկյանին ասվում էր, որ ըստ կապիտան Մեդվեդևի և փոխգնդապետ Ալ. Շնեուրի՝ վարչապետը կարգադրել էր գեներալ-մայոր Դ. Բեկ-Փիրումյանին՝ ապահովել Հետաքննիչ հանձնաժողովի մուտքը Զոդ: Հեռագրում խնդրվում էր նորից ստուգել ամեն ինչ և ինչ ասել, եթե Հետաքննիչ հանձնաժողովի մուտքը դեպի Զոդ չհանգեցնի խաղաղ ճանապարհով դրական արդյունքների: Այդ պարագայում գեներալ Դ. Բեկ-Փիրումյանին հրահանգվում էր հրամանատարության միջոցով ուղիղ գծով կապվել կառավարության հետ և զինված ուժ չգործադրել՝ մինչև այդ մասին ՀՀ կառավարությունից համապատասխան թույլտվության ստանալը (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 59): Հետագա քայլերում ՀՀ կառավարությունը նորանոր ճշգրտումներ է մտցնում իր քայլերում, փորձում դուրս գալ ստեղծված ճգնաժամային իրավիճակից: 1919 թ. ապրիլի 8-ին ՀՀ Արտգործնախարարը Ադրբեջանի Արտգործնախարարից ստանում է հեռագիր, որում Ադրբեջանի ներկայացուցիչը, Զոդի շրջանը համարելով Ադրբեջանի տարածք, անթույլատրելի էր համարում հայկական զինված ուժերի առկայությունը Ադրբեջանի տարածքում, և թյուրիմացությունից խուսափելու պատասխանատվությունը դնում էր ՀՀ կառավարության վրա (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 64):

ՀՀ Արտգործնախարարը Ադրբեջանի Արտգործնախարարին (պատճենը՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին Ադրբեջանում՝ Բեկզադյանին) ուղղված ապրիլի 3-ի հեռագրում ընդգծում էր, որ Զոդ գյուղում տեղի ունեցած դեպքերը հետաքննելու, մեղավորներին գտնելու և օրինական պատասխանատվության ենթարկելու համար ՀՀ կառավարության կողմից այնտեղ է ուղարկվել Արտակարգ քննիչ հանձնաժողով, որին սակայն չի թույլատրվել դեպքերի վայրը հասնել՝ զինված թաթարների դիմադրության պատճառով: Հայտնում էր, որ կառավարությունը զինվորական ջոկատին հրահանգ է տվել ապահովել Արտակարգ հանձնաժողովի մուտքը՝ հետաքննության համար, իրազեկելով, որ բրիտանական գնդապետ Քլ. Թեմպերլին գեներալ Վ. Թոմսոնի հանձնարարությամբ մեկնել է Զոդ՝ նպաստելու Արտակարգ քննիչ հանձնաժողովի ժամանմանը Զոդ և հետաքննության անցկացմանը, նշելով նաև, որ Հայկական կառավարությունը հանձնարարել է կոնֆլիկտը հարթել խաղաղ ճանապարհով, իսկ եթե չհաջողվի, զենքի ուժի չդիմել առանց կառավարության թույլտվության (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263 թ. 62, 64):

Ինչպես ակնհայտ է դառնում գեներալ-մայոր Դ. Բեկ-Փիրումյանի հեռագրերից՝ ուղղված դիվիզիայի հրամանատարին, դեպքերի վայր ժամանած գնդապետ Քլ. Թեմպերլին Զոդից վերադառնալով Բասարգեչար՝ թաթարներին հայտարարել էր, որ ապրիլի 11-ին հայկական զորքերը պետք է գրավեն գյուղերը, որին թաթարները պատասխանում են, որ գյուղերի գրավումը հայկական զորքերի կողմից հնարավոր է միայն բրիտանական ներկայացուցչի անմիջական ներկայության և

մասնակցության պայմաններում՝ վերջինիս ուղղակի կարգադրությամբ: Դ. Բեկ-Փիրումյանը զորքերի համալրում էր խնդրում, ավելացնելով, որ թաթարները շարունակում են զինվել, որ գնդապետ Քլ. Թեմպերլիի հետ պայմանավորվածության համաձայն իրենց զորքերը ապրիլի 13-ին կարող են սկսել թաթարական Տաշքենդ, Զոդ, Մեծ Մազրա և Փոքր Մազրա գյուղերի գրավումը, թաթարների զինաթափումը իրականացնելով խաղաղ ճանապարհով, իսկ դիմադրելու պարագայում՝ զենքով (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 76):

Մահմեդական շարժման ակտիվացմանը Բասարգեչար-Զոդի շրջանում ՀՀ Նախարարների խորհուրդը հերթական անգամ անդրադառնում է իր 1919 թ. ապրիլի 14-ին: Նիստում լսվում է զինվորական նախարարի զեկուցումը գեներալ Դ. Բեկ-Փիրումյանին Զոդի դեպքերի առթիվ հրահանգներ տալու մասին, ըստ այդմ որոշվում է հանձնարարել Զինվորական նախարարին հեռագրել Դ. Բեկ-Փիրումյանին, որպեսզի՝ 1) նա գործի Քլ. Թեմպերլիի ցուցմունքների համաձայն, 2) եթե անհրաժեշտ լինի, զինված ուժի դիմելու՝ Քլ. Թեմպերլիին դիմել՝ գրավոր առաջարկ ներկայացնելու խնդրանքով, և 3) աշխատել չդիմել բռնագրավումների և ամենակտրուկ միջոցներ ձեռք առնել, որպեսզի ազգաբնակչության նկատմամբ բռնություններ չկիրառվեն, այդ մասին հայտարարելով ժողովրդին (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 96, թ. 65: ֆ. 201, ց. 1, գ. 486, մաս I, թ. 96):

Նույն օրը ՀՀ Արտագործնախարարությունը հատուկ գրությամբ տեղեկացնում է Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին, որ Ադրբեջանի կառավարության բողոքի և Բասարգեչարի շրջանում հայկական զորքերի հետ կապված իրենք գտնում են, որ այդ տարածքը չի կարող դիտվել իբրև Ադրբեջանի տարածք, որ Բասարգեչարի շրջանը ՀՀ տարածքի անբաժանելի մասն է, կրկնելով, որ ՀՀ կառավարությունը բողոքում է ադրբեջանական իշխանությունների կողմից Ադրբեջանի տարածքից ՀՀ սահմանները ուղարկվող զինված թաթարական խմբերի անցման դեմ, որոնք այնտեղ խռովություններ են տարածում և բնակչությանը գրգռում զինված հակամարտության՝ ընդդեմ Հայաստանի իշխանությունների (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 79, 82):

Ինչպես պարզվում է, գեներալ-մայոր Մ. Սիլիկյանին ուղղված գեներալ-մայոր Դ. Բեկ-Փիրումյանի ապրիլի 14-ի հեռագրից, գնդապետ Քլ. Թեմպերլիի առաջարկի համաձայն, ապրիլի 14-ի առավոտյան ժամը 7-ին հայկական զորքերի Նոր Բայազետի զորաջոկատը երկու զորաշարքերով սկսում է հարձակում թաթարական գյուղերը գրավելու համար: Սակայն Մեծ Մազրայի թաթարները հանկարծակի ուժեղ հրացանակրակ են բացում, որին հայկական հետևակը չի պատասխանում, շարունակելով իր առաջխաղացումը դեպի գյուղ, փոխարենը գյուղի վրա մի քանի հրետանազարկ է տրվում, որը թաթարներին ստիպում է նահանջել: Այդ ամենից հետո պարզվում է, որ գյուղը նախօրոք բնակչության կողմից լքված է եղել՝ իր հետ տանելով ողջ ունեցվածքը, որ հնարավոր էր տեղափոխել, իսկ կրակ արձակողները եղել են գյուղում մնացած թաթարական խմբերը: Այս նույնը կրկնվում է Հուսեյն Ղարալի, Աղալու, Կոշա Բալաղ, Գալբաշ և Սիրի Աղունի գյուղերի գրավման ժամանակ, իսկ Տաշքենդ գյուղի մերձակայքում տեղի են ունենում մարտեր, որից հետո հայկական զորամասը գրավում է գյուղը, իսկ հակառակորդը

փախչում է դեպի սարերը: Ապրիլի 14-ի մարտերում հայերը տալիս են 3 սպանված, վիրավորվում է փոխգնդապետ Իշխանովը, որը սակայն վիրավորվելուց հետո վերադառնում է մարտաշարք: Սակայն այնուհետ հայերը տալիս են որոշակի մարդկային և նյութական անցանկալի և ցավալի կորուստներ՝ 15 սպանված և 8 ձի: Հատկանշական է, որ բոլոր կարգադրությունները արվել են գնդապետ Քլ. Թեմպերլիի ներկայությամբ և վերջինիս գիտությամբ, որը մարտերի ընթացքում զորքերի կողմից ոչ մի բռնություն և կողոպուտ չտեսավ: Հայկական բանակի առաջապահ զորամասերը գրավում են Մեծ Մազրան, Հուսեյն Ղում Աղալուն, Գալբաշին, Տաշքենդը (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 86, 86ա: Ֆ.199, ց. 1, գ. 64, թ. 9):

Ապրիլի 15-ին, ժամը՝ 7-ին հայկական կողմը Ջոդ գյուղ է ուղարկում բանագնացների՝ սպիտակ դրոշակներով, սակայն թաթարները կրակ են արձակում նրանց վրա, որից հետո հայկական կողմը երկրորդ անգամ է բանագնացներ ուղարկում, որոնք ևս չեն կարողանում գյուղ մտնել, որից հետո միայն Ղարաբաղյան գումարտակը անցնում է հարձակման և առանց կրակոցի գրավում Ջոդը, որտեղից թաթարները փախել էին: Այդ նույն բանը կատարվում է նաև Սար-Յաղուբ, Ղարա-Գոպլի, Աղքիլիսա, Ջարզիբիլ գյուղերի գրավման ժամանակ, որոնց բնակիչները նախօրոք լքել էին դրանք՝ ողջ ունեցվածքը դուրս բերելով: Այդ մարտերի ընթացքում վիրավորվում են 1 սպա, 18 զինվոր և 2 ձի, սպանվում են 3 զինվոր և 3 ձի (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 89; ֆ. 199, ց. 1, գ. 64, թ. 10):

Ինչպես ակնհայտ է դառնում գեներալ-մայոր Դ. Բեկ-Փիրումյանի Բասարգեչարից 1919 թ. ապրիլի 16-ին գեներալ-մայոր Մ. Սիլիկյանին ուղարկված հեռագրից, ապրիլի 15-ին հետախույզներ են ուղարկվում Շորժալու գյուղ, սակայն պարզվում է, որ գյուղում խաղաղ տրամադրություններ չեն իշխում, և վերջիններս ենթարկվում են գնդակոծման և ապրիլի 16-ին Թաղի-Քենդ գյուղի մատույցները զբաղեցնող զորաջոկատները տեղաշարժվում են դեպի Շորժալու՝ դարձյալ գնդակոծվելով այնտեղ դարանակալած թաթարների կողմից: Գյուղը հրետանակոծման ենթարկելուց հետո հայկական զորամասը կարողանում է մտնել գյուղ, և գրավել այն, իսկ փախած թաթարները ապաստանում են մոտակա լեռներում (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 64 (48), թ. 8):

Գեներալ-մայոր Դ. Բեկ- Փիրումյանի ապրիլի 23-ի հեռագրից՝ ուղղված գեներալ-մայոր Մ. Սիլիկյանին, մենք տեղեկանում ենք հաջորդ օրերի մարտական գործողությունների ժամանակագրությանը և մանրամասներին: Ապրիլի 18-ին, ժամը՝ 16-ին Շիշկայա գյուղն է ուղարկվում Ղարաբաղյան գումարտակի մի վաշտ և հանդիպում է թաթարների կրակին: Չնայած թաթարների համառ դիմադրությանը, գյուղը գրավվում է, որից հետո պարզվում է, որ այնտեղ զգալի ուժեր են եղել՝ մոտ 1000 հետևակ և հեծելակ: Նախօրոք գյուղից թաթարները դուրս բերած են լինում իրենց ունեցվածքը և ընտանիքները: Այս մարտերի հետևանքով հայկական կողմը տալիս է 8 զինվոր և 2 ձի վիրավոր, 1 զինվոր սպանվում է, վիրավորվում է նաև պրապորշչիկ Մխիթարյանցը (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 97):

Այս բոլոր գործողությունների ընթացքում հայ-ադրբեջանական սահմանի ողջ երկայնքով լարվածություն էր իշխում, ադրբեջանցիները դիմում էին բազմաբնույթ խարդավանքների, զորքերի զգալի տեղաշարժերի՝ բոլորն էլ ակնհայտ հա-

կահայկական ուղղվածության: 1919 թ. ապրիլի 29-ին ՀՀ Արտաքին Գործերի նախարարին ուղղված հեռագրում Գլխավոր շտաբի պետ, գնդապետ Միխայիլ Զինկևիչը հայտնում էր, որ Միլիցիոն գնդի հրամանատարից ստացված տեղեկատվության համաձայն ապրիլի 23-ին Յաղուբլիով Ջիլի ուղղությամբ գնացել են ադրբեջանական զորքերի խմբեր, ապրիլի 25-ին սպասվել է ադրբեջանական զորքերի ժամանումը Նովոսարատովկա և Նովոիվանովկա: Գնդապետ Մ. Զինկևիչը նշում էր, որ միլիցիոն գնդի հրամանատարին կարգադրություն է արված այդ տեղեկությունները ստուգել և այդ մասին հայտնել իրեն (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 100): Սակայն այդ ամենը չեն կարողանում խոչընդոտել ու խանգարել Հայկական բանակին եզրափակելու Զոդյան օպերացիան, դաս տալու մահմեդական ագրեսիվ տրամադրված ուժերին, որոնք ձգտում էին Բասարգեչարի շրջանը կտրել Հայաստանից և կցել Ադրբեջանին: Հայկական զորամասերը տանում են տպավորիչ հաղթանակ, ազատագրելով հայրենի տարածքի մի կարևոր մասը, ընդ որում դրսևորելով լավ ու մարտունակ զորքին հատուկ կարգ ու կանոն, կարգապահություն, զերծ մնալով հափշտակություններից և կողոպուտներից:

Եվ այնուամենայնիվ, ՀՀ կառավարության կողմից Զոդի շրջանը գործուղված Արտակարգ քննիչ հանձնաժողովը փորձեց բացահայտել այն շարժառիթները, որոնք ընկած էին Զոդ-Բասարգեչարի մահմեդականների ապստամբական-խռովարարական գործողությունների հիմքում: Այդ եզրակացություններն արվել են 1919 թ. ապրիլի 27-ի վիճակով և հանգում էին հետևյալին.

1) Մուսուլմանների շրջանում հետաքննության անցկացման անհնարինության հետևանքով հնարավոր չեղավ ճշգրիտ պարզելու մահմեդական ապստամբության շարժառիթները ընդդեմ Հայաստանի իշխանությունների: Ենթադրվում է, որ ռոտմիստր Ալ. Սիլիկյանի չափից ավելի մեծ պահանջները՝ իրենց տրամադրելու ցորեն և գարի, ընդամենը առիթ է հանդիսացել տխուր հանգուցալուծման համար, իսկ մահմեդականների դժգոհությունը իշխանություններից օրեցօր աճել է և վերածվել բախման: Պատճառների դեր կատարել են մի շարք հանգամանքներ.

2) 1918 թ. օգոստոսին ողջ Զոդի շրջանը Ադրբեջանի Հանրապետության կառավարության կողմից ճանաչվել է (կամ ընդունվել) որպես Ադրբեջանի սահմանների մեջ մտնող տարածք և հայտարարվել որպես Ելիզավետպոլի գավառի 9-րդ ոստիկանական տեղամաս, նշանակվել են իրենց կոմիսարները և միլիցիան: 1919 թ. հոկտեմբերին այդ շրջանը ենթարկվեց Հայաստանին, մահմեդական բնակիչներն էլ, թեկուզ և չկամությամբ, իշխանություններին ենթարկվելու պատրաստակամություն արտահայտեցին, չկտրելով իրենց կապերը Ադրբեջանի հետ:

3) 1918 թ. վերջին Նոր Բայազետի գավառ է գործուղվում ռոտմիստր Ալ. Սիլիկյանը՝ Ղարաբաղյան հեծյալ դիվիզիոն կազմավորելու նպատակով, սակայն դրա համար ոչ մի միջոց պետական գանձարանից բաց չի թողնվում: Ալ. Սիլիկյանին հնարավորություն և իրավունք էր տրվել բռնագրավել ձիերը, հանդերձանքը, զենք և դիվիզիոնը պահելու համար անհրաժեշտ ամեն ինչ: Բռնագրավումները սակայն անցկացվել էին որոշ չարաշահումներով, անտեսելով այդ նպատակով և այդ դեպքերի համար նախատեսված հանձնաժողովների կողմից սահմանված կարգը, սակայն դրանով զբաղվել էր ամեն ոք, ցանկացած սպա, կոմիսար, ուրյադնիկ, միլի-

ցիոներ և այլն. մեծմասամբ բռնագրավված ունեցվածքի դիմաց տրվել էին ընդամենը ստացականներ, այդ ընթացքում թույլ էին տրվել այլ չարաշահումներ ևս, և գլխավորապես մահմեդական գյուղերում ձիերի բռնագրավումների ժամանակ, քանզի ոչ բոլոր բռնագրավման ենթարկված ձիերն էին գնացել դիվիզիոնի կարիքներին ծառայելու, ձիերը պետական գներով վաճառվել էին կողմնակի, դիվիզիոնի հետ ոչ մի առնչություն չունեցող անձանց, կամ էլ վաճառվել էին պարզապես իրենց նախկին տերերին, իհարկե ավելի բարձր գներով, իսկ բռնագրավված անասնակերը վաճառվել էր: Այս բոլոր երևույթները առաջ բերեցին մահմեդական բնակչության դժգոհությունը, որին, իհարկե, առիթ էր պետք Հայաստանի օրինական իշխանությունների դեմ ապստամբելու:

Եվ վերջապես. 4) 1919 թ. հունվարի վերջերին գաղթական հայերը ոմն Նիկոլայ Ավետիսովի գլխավորությամբ հարձակվում են մահմեդական Ջագալու, Ղըզըլ-Վանք և Սուբբոտան գյուղական բնակավայրերի վրա և թալանում դրանք, իսկ գյուղացիները փախչում են Ջոդի շրջանի մյուս գյուղերը. նախապատրաստվող հարձակման մասին ժամանակին զգուշացված է լինում մահմեդական տեղամասային կոմիսարը, սակայն նրա կողմից ոչ մի միջոց չի ձեռնարկվում: Ճիշտ է, գործով անցկացվում է նաև հետաքննություն և կողոպտված ունեցվածքի մի մասը վերադարձվում է մահմեդականներին, և առհասարակ՝ բոլոր նրանց, ումից վերցվել է կողոպտված ունեցվածքը, սակայն մեղավորները չեն բացահայտվում: Այս կարևոր պատճառներն էլ, ըստ էության, Արտակարգ քննիչ հանձնաժողովի նախագահ Փարսադանովի եզրակացությամբ, առաջ բերեցին ուժեղ դժգոհություն մահմեդականների մեջ, որոնք նույնիսկ բացեիբաց հայտարարել էին, որ Հայաստանում ոչ մի իշխանություն էլ չկա և իրենք չեն ցանկանում ոչ մեկի ենթարկվել: Այդ իսկ շարժառիթներով էլ Սիլիկյանների և այլոց սպանությունից (1919 թ. փետրվարի 27) մի քանի օր առաջ Ջոդ գյուղից հեռացվել էր միլիցիայի հենակետը: Այս եզրակացությանն է գալիս ՀՀ կառավարության կողմից Ջոդ գործուղված Արտակարգ քննիչ հանձնաժողովը 1919 թ. ապրիլի 27-ի վիճակով, իսկ մայիսի 2-ին այն հաստատում է Արդարադատության նախարարության գրասենյակի դիրեկտորը (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 68–72: ֆ. 199, ց. 1, գ. 64 (48), թ. 11–15): 1919 թ. մայիսի 5-ին լսելով Արդարադատության նախարարի պաշտոնակատարի զեկուցումը Ջոդի դեպքերի առթիվ կառավարության կողմից ուղարկված Արտակարգ քննիչ հանձնաժողովի գործունեության մասին (զեկ. 951, մայիսի 2)՝ Նախարարների խորհուրդը հանձնարարում է Արդարադատության և ՆԳ նախարարներին օրինական պատասխանատվության ենթարկել մեղավորներին (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 96, թ. 83, գ. 100, թ. 84):

Հարցն առաջ բերեց դիվանագիտական-քաղաքական բարդություններ: 1919 թ. ապրիլի 10-ին Նախարարների խորհուրդը լսեց վարչապետի զեկուցումը՝ Թեքինսկու հարուցած միջնորդության մասին Ջոդի շրջանում զորքերը ետ քաշելու և Քննիչ հանձնաժողովի մեջ թուրք ներկայացուցչի մասնակցության մասին և հանձնարարեց Արտգործնախարարին հայտարարել Թեքինսկուն, որ ստեղծված պայմաններում զորքը ետ քաշելը ռազմական պատճառներով անհնարին է, իսկ Արտակարգ քննիչ հանձնաժողովի մեջ թուրք ներկայացուցչի մասնակցության

դեմ առարկություն չկա (ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.96, թ.63)։ Ինչպես տեսնում ենք, Զոդ-Բասարգեչարի շրջանում հայկական իշխանությունները ձգտում էին ելնել որոշակի օրինականության սկզբունքներից, խուսափելով ավելորդ և անտեղի բարդացումներից ու սրացումներից։ 1920թ. ապրիլի 6-ին լսելով ՆԳ նախարարի զեկուցումը Բասարգեչարի հանձնաժողովի «ապօրինի գործողությունների մասին»՝ Նախարարների խորհուրդը ընդունված որոշման մեջ Քննիչ հանձնաժողովի կարգադրությունը ապօրինի և պետական շահերի տեսակետից խիստ վնասակար համարելով, ՆԳ նախարարությանը հանձնարարում է բոլոր փաստաթղթերը և նյութերը հանձնել Զինվորական դատարանին (ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.146, թ.56)։

Ստեղծված բարդ իրավիճակում հայկական իշխանությունները տեղի չտալով մահմեդական ճնշմանը, օրինական եղանակներով ապահովեցին ՀՀ անվտանգային շահերը Սևանի ավազանում՝ կանխելով Ադրբեջանի վտանգավոր տարածքային-քաղաքական հավակնությունները, ինչը դյուրին խնդիր չէր։

Հայկական բանակի գործողությունները Զոդ գյուղի շրջանում բարձր գնահատականի արժանացան նույնիսկ բրիտանական ծառայության գնդապետ Քլ.Թեմպերլիի կողմից։ Թաթարական գյուղերը մարտով գրավելու ժամանակ զորաջոկատի գործողությունները կարգապահության և սպաների ու զինվորների խիզախության առումով այնքան գերազանց էին, որ գնդապետ Քլ.Թեմպերլին, օպերացիայի ավարտից հետո ժամանելով Երևան, իրեն պարտավորված համարեց այդ մասին իր զեկույցում բարեխոսել Հայաստանի կառավարության առաջ ջոկատի տոկուն և կարգապահ գործողությունների մասին։ Նախարարների խորհուրդը, ապրիլի 24-ին լսելով գնդապետ Քլ.Թեմպերլիի դրվատանքով լի կարծիքը, շնորհակալություն հայտնեց գեներալ-մայոր Դ.Բեկ-Փիրումյանին և բոլոր սպաներին ու զինվորներին մարտական փայլուն գործողությունների համար Զոդի շրջանում։ Արդեն Զինվորական նախարար, գեներալ-մայոր Քրիստափոր Արարատյանը իրեն երջանիկ համարեց՝ ի դեմս երիտասարդ Հայկական բանակի, շնորհակալություն հայտնել գեներալ-մայոր Դ.Բեկ-Փիրումյանին և նրա շտաբի պետ, գնդապետ Ալ.Շնեուրին՝ որպես փառավոր մարտական փորձ ունեցող սպաների, որոնք ստեղծել էին և ոգեկոչել Զոդի ջոկատը և նրա կողմից իրականացված անթերի ռազմական օպերացիան, որն էլ առաջին անգամ բարեհունչ գնահատական ստացավ անգամ բրիտանական բանակի երևանյան ներկայացուցիչ գնդապետ Քլ.Թեմպերլիի կողմից, ինչի հակապատկերն էին վերջինիս գործընկերներ բրիտանացի գեներալներ Ուիլյամ Թոմսոնը և Դիգբի Շատելվորտը Ղարաբաղ-Արցախում վարած իրենց հակահայ, թուրքամետ դիրքորոշումով։

Զինվորական նախարարը կարգադրեց հատկապես աչքի ընկած սպաներին ներկայացնել զինվորական կոչման հերթական աստիճանի, իսկ զինվորների պարգևատրման համար շտաբի պետ, գնդապետ Ալ.Շնեուրին ի պահ վերցնել Գեորգիևյան 4 խաչեր յուրաքանչյուր վաշտի, մարտկոցի և հեծելավաշտի համար (ՀԱԱ, ֆ.204, ց.1, գ.132, թ.68)։ Այս օպերացիայից հետո ՀՀ Զինվորական նախարարության 1919թ. ապրիլի 28-ի հրամանով Առանձին Ղարաբաղյան բրիգադի պետ, գնդապետ Ալ.Շնեուրը նշանակվում է Գլխավոր շտաբում որպես բաժնի պետ (ՀԱԱ, ֆ.204, ց.1, գ.131, թ.24)։

Այսպիսով, ինչպես արդի փուլում, այնպես էլ 1918–1920թթ. Հայաստանի Հանրապետությունը բախվեց արտաքին քաղաքական առաջնահերթությունների բարդ ընտրանքի, և գլխավորապես, իր տարածքային ամբողջականության պահպանմանը սպառնացող լուրջ վտանգների հետ: Բասարգեչարի շրջանի Զոդ գյուղի շուրջ ծավալված բախումնալից ռազմաքաղաքական իրադարձություններից հետո, որը հայկական զինուժի ամենափայլուն գործողություններից էր, այդ տարածաշրջանի մուսուլման բնակչության մեծ մասը արդեն 1919թ. տեղափոխվեց Ադրբեջանի տարածք, որտեղից նա ետ վերադարձավ միայն խորհրդային իշխանության հաստատմամբ և պարտադրմամբ: Այնուամենայնիվ Զոդ-Բասարգեչարի հարցը ՀՀ կառավարությունը և ձևավորվող հայկական պետականությունը այդ պատմափուլում լուծեց հաջողությամբ, որն անգամ արժանացավ բրիտանական բարձր աջակցությանը, ինչը բացառիկ դեպք էր ի տարբերություն Արցախ-Ղարաբաղի հիմնախնդրի, որում Մեծ Բրիտանիան և ՀՀ մյուս թվացյալ դաշնակիցները, հանուն իրենց նավթային և գաղութային-կայսերապաշտական շահերի, բացահայտ հովանավորեցին և աջակցեցին բոլշևիզմի և Ռուսաստանի դեմ պատնեշի դեր կատարող Մուսավաթական Ադրբեջանին: Այդուհանդերձ զոդբասարգեչարյան խռովահույզ իրադարձությունների ժամանակ Ադրբեջանին չհաջողվեց անդամահատել ՀՀ տարածքային ամբողջականությունը Սևանա լճի ավազանում և հարակից շրջաններում, ինչը միանգամայն կարևոր էր նորահոչակ հայկական պետականության առջև կանգնած մարտահրավերների մեկնակետից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արխիվային փաստաթղթեր

ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.1
ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.20
ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.27
ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.44
ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.64
ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.73
ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.96
ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.100
ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.146
ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.26
ՀԱԱ, ֆ.201, ց.1, գ.168
ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.211, մաս 1
ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.263
ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.353
ՀԱԱ, ֆ.204, ց.1, գ.104
ՀԱԱ, ֆ.201, ց.1, գ.486, մաս 1
ՀԱԱ, ֆ.204, ց.1, գ.129
ՀԱԱ, ֆ.204, ց.1, գ.131
ՀԱԱ, ֆ.204, ց.1, գ.132
Հայաստանի առաջին Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 25/25

Պարբերական մամուլ

«Արև» 1919–«Արև» թերթ, Բաքու, փետրվարի 11, 1919:
«Զանգ» 1918–«Զանգ» թերթ, Երևան, 11 դեկտեմբերի 1918:
«Единая Россія» 1919–«Единая Россія», Баку, 26 марта, 1919.
«Кавказское слово» 1918–«Кавказское слово», Тифлис, 7 декабря, 1918.
«Кавказское слово» 1919–«Кавказское слово», Тифлис, 5, апреля, 1919.
«Кавказское слово» 1919–«Кавказское слово», Тифлис, 25 апреля, 1919.

Գրականություն

ԱՎԵՏԻՍՅԱՆ 1997 – Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997:

ԳՐԻԳՈՐՅԱՆ, ԲՈԲՈԽՅԱՆ 2020 – Գրիգորյան Ա, Բոբոխյան Ա, Օպերացիա «Ջոդ». Ինչպես Հայաստանը 1919-ին պահեց Սոթքի բնագիծը, Երևան, 2020:

ԴԷՈՅԵԱՆՑ 1945 – Դէոյեանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, սեպտեմբեր-հոկտեմբեր 1945, №5 (250), էջ 93 – 100:

ԿՆՅԱԶՅԱՆ 2008 – Կնյազյան Դ., Ադրբեջանի Դեմոկրատական հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918 – 1920 թթ., Երևան, 2008:

ՀԱԿՈԲՅԱՆ, ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ, ԲԱՐՍԵՂՅԱՆ 1986 – Հակոբյան Թ. Խ., Մելիք -Բախշյան ՍՏ. Տ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հատոր 1 (Ա-Դ), Երևան, 1986:

ՀԱԿՈԲՅԱՆ, ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ, ԲԱՐՍԵՂՅԱՆ 1998 – Հակոբյան Թ. Խ., Մելիք -Բախշյան ՍՏ. Տ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հատոր 4 (Պ-Ֆ), Երևան, 1998:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2012 – Հարությունյան Հ. Մ., Նոր Բայազետի գավառը 1914 – 1920 թթ., Երևան, 2012:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 2005 – Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն: Հատոր I. Առաջին Տարին, 1918 – 1919, Երևան, 2005:

ՌՈՒԲԷՆ 1982 – Ռուբէն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները. Է. հատոր. Գ. Արտասահման, Սասուն և Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982:

ՎԻՐԱԲՅԱՆ 2003 – Վիրաբյան Վ., Հայաստանի առաջին հանրապետության միլիցիան և Ներքին Գործերի նախարարությունը (1918 – 1920 թթ.), Երևան, 2003:

ՎԻՐԱԲՅԱՆ 2009 – Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը (1918 – 1920 թթ.), Երևան, 2009:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ 2004 – Տեր-Մինասյան Ա., Անտուան Պուադեբարը և Հայաստանը, «Բանբեր Հայաստանի Արխիվների», 2004, №2, էջ 79 – 105:

ՔԱՋԱԶՆՈՒՆԻ 1923 – Քաջազնունի Յովհ., Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ ևս. Վիեննա, 1923:

ՔԱՋԱԶՆՈՒՆԻ 1993 – Քաջազնունի Յովհ., Հայաստանի Հանրապետութիւն, Երևան, 1993:

ВЕЛИКАЯ ОКТЯБРЬСКАЯ РЕВОЛЮЦИЯ 1957 – Великая октябрьская революция и победа советской власти в Армении, Сб. документов. Ред. А. Мнацаканяна, А. М. Акопяна, Г. М. Даллакяна, Ереван, 1957.

ДЕНИКИН 1925 – Деникин А., 1925, Очерки русской смуты, Вооруженные силы Юга России. Том IV, Париж – Берлин, 1925.

НАГОРНЫЙ КАРАБАХ 1992 – Нагорный Карабах в 1918 – 1923 гг., Сборник документов и материалов. Под. Ред. Акопян В. А. Баликян О. С. Вирабян А. С. Микаелян В. А. Эвоян В. С., Ереван, 1992.

ТУМАНЯН 2012 – Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918 – 1920 гг., Ереван, 2012.

Vanik Virabyan
Doctor of Sciences in History, Professor
Armenian State Pedagogical University After Khachatur Abovyan
vanik.virabyan@mail.ru

ZOD-BASARGECHARYAN MUSLIM POPULATION REBELLION 1919 IN ARMENIA IN THE CONTEXT OF GREAT BRITAIN MILITARY REPRESENTATIVE COLONEL CLIVE TEMPERLEY'S ACTIVITIES

Keywords: Zod, Basargechar (Vardenis), Armenian Army, Tatar-Azerbajdjanian, Cl. Temperley, muslim, Republic of Armenia.

During 1918–1920s the Republic of Armenia made huge efforts in preventing hostile forces and intrigues especially in the regions of Surmalu, Kars, Aralich, Zangibasar, Vedibasar, Boyuk Vedi, Nachijevan, Zangezur, Zod Basargechar and in other areas. From the existing archives and other documents it follows what difficulties of Armenian government went for preventing Azerbaijan-Turkish special activities.

In the days of the First Republic of Armenia, the successful activity of the Armenian government had considerable results in the cause of revealing the evident anti-Armenian intrigues and espionage activity of the Azerbaijan in Yerevan to undermine the bases of Armenian Statehood and bring about anti-Armenian revolts in Zangibasar, Boyuk-Vedi as well as in Zod and other Armenian districts by directly bribing the local Azerbaijanians for the purpose of tearing away the primordial Armenian territories in the presence of the British representative, Colonel C. Temperley.

Ваник Вирабян
Доктор исторических наук, Профессор
Армянский Государственный Педагогический Университет имени Хачатура Абовяна
vanik.virabyan@mail.ru

ЗОД-БАСАРГЕЧАРСКОЕ МУСУЛЬМАНСКОЕ ВОССТАНИЕ 1919 г. В АРМЕНИИ В КОНТЕКСТЕ ДЕЯТЕЛЬНОСТИ ВОЕННОГО ПРЕДСТАВИТЕЛЯ ВЕЛИКОБРИТАНИИ ПОЛКОВНИКА КЛАЙВА ТЕМПЕРЛИ

Ключевые слова: Зод, Басаргечар (Варденис), армянская армия, татар -азербайджанец, Кл. Темперли, мусульманин, Республика Армения.

В 1918–1920 гг. РА предприняла немало усилий в деле приостановления вражеских происков и интриг против армянского государства, в том числе азербайджано-тюркских и иных сил в Боюк-Веди, Зангибасаре и Ведибасаре, в Ардагаском, Карсском и Сурмалинском (в частности, в Аралыхе) районах, в Нахичеванском и в Зангезурском уездах, Зод-Басаргечарском районе и т. п.

В годы Первой Республики Армения велась успешная деятельность армянского правительства, которая привела к конкретным и ощутимым результатам в деле разоблачения явно антиармянских происков в самой Армении, пытавшееся подорвать основы армянской государственности и путем прямого подкупа местных азербайджанских лидеров вызвать антиармянские мятежи в Зангибасаре, Боюк-Веди, в Зодском районе и в других районах Армении, с целью отторжения исконно-армянских территорий от Республики Армения в присутствии британского представителя полковника Кл. Темперли.